



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





ULPVR

352



1/2

—

45752


352

Կ. Պ. ՊՄԵՐՈՒ ՀԱՅՈՅ

ԳՐԱԴԱՐԱՆ ԿՆՍՏԱՆՍ

ԵՒ

ԳՐԱԴԱՐԱՆ ԿԵՆՍԱՅ ԲՍՅԵԱԼ



2004

ԳՐԵԱՅ

ԳՍԼՈՒՄՏ Վ. ԼՃԵՅԻ

313



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԵՐԱՆ

1862



12827

*[Faint, illegible text and markings, possibly bleed-through from the reverse side of the page]*



352-2004

4502 / 41 8

лр 352





### Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Ընթերցող, եթէ այս տետրակին վերնագիրը  
է. Պօլիս Հայոց Գուռն դրախտի բացեալ ըլլար, եւ  
եթէ դու ալ յուսայիր թէ աչքերդ այս տառերուն ու  
դին սպառելով՝ թերեւս չըհասնէիր ալ դրախտի բաց-  
եալ դրան մը, գէթ հասնէիր ծաղկաւէտ պարտէզի մը  
բացեալ դրան, ազդեմ քեզ որ՝ գլանիկովս (սէկօ) ՌՎ-  
կիանոս ծովը պիտի վառէի. բայց մէջի ձուկերն ու  
կենդանիները աղաչեցին որ չ'այրեցի, ըսուելու  
նման ստի մը ինքզինքդ հաւատացընել պիտի ջա-  
նայիր, վասն զի դնացածդ Հայոց համար՝ մեռե-  
լոց աշխարհ մի է եւ պատերազմի ասպարէզ մը՝ ո-  
րուն մէջ պիտի տեսնես մեծամեծ կոտորածնե-  
րու մնացորդներ, սրախողխող ցուրտ դիակ-  
ներ եւ յետին շունչերնին քաղող անհամար վիրա-  
ւորեալներ, եւ դեռ ողջ մնացածներ ալ, որ անդա-  
դար կը պատերազմին գիշերը լուսացած ըլլալով  
հանդերձ չըճանչնալով դիրեար եւ չգիտնալով՝ որ  
թշնամեաց յարձակումէն առաջ, իրենք են իրենց  
բանակը ջարդողները: Եւ այն տանը պիտի ապշիս  
եւ պիտի զարհուրիս, երբ որ տեսնես թէ՛ այն մեռ-  
նողները եւ վիրաւորեալներն ու դեռ այն անվեր-  
ջանազի պատերազմները կոյր մոլեղնութեամբ ջա-



բունակողները՝ քու ալ եղբայրներդ են : Ահա՛ ուղին . եթէ կ'ուզես , աչքերդ մաքիւր կարապետ ըրէ : Սակայն նայէ որ Պատրիարքութենէն հըրածարած եւ շարանենդութենէն շըհրածարած ի մը սիրտը փոխ առնես , որ կարենաս այն մահուան եւ ցաւոց ներդաշնակութիւն արձակող ասպարէզը դու արձութիւն զգալով ծայրէ 'ի ծայր շրջիլ . . . : Արդարեւ ազգի մը եւ ժողովրդեան մը , կորուստ եւ կամ կեանք պատճառող համարուելու արժանի նիւթի մը եւ անոր դանաղան պատճառացն ու պարագայիցը վրայ մանրամասնաբար հարկ է դրել , բայց մեք առ այժմ համառօտ խօսելու ստիպուած եմք : Պիտի խօսինք Հայոց Պօլիս դաղթելուն վնասուցը եւ օգտիցը վրայ :

Հայաստանի թշուառ վիճակի մէջ ինկնելուն գլխաւոր պատճառներէն մէկն ալ՝ իրեն ժողովրդեան հաւատքն ու հաճատութիւնը չըկորսնցնելու համար՝ օտար երկիրներ դաղթելնին կը գտնենք , որոնց ամեն մէկ քայլափոխին կորստեան վիճ մը եւ խորխորատ մը բացուէր է առջեւնին : Ժամանակ մը դիմած են Հայք դէպ 'ի Ներսարայ քրիստոնէից աշխարհը՝ իրենց Հայութիւնը կլանող եօթնագլխեան վիշապաց բերանը , անոնց վիշապական թեւերը հըրեշտակի թեւ կարծելով ու խարուելով . . . բայց այն ճակրտով չ'եկան Հայք Պօլիս : Հայք Պօլիս դաղթեցին վաճառականութեան եւ հանդստութեան ու իրենց մոլութեանց ծառայելու . սակայն մեք պիտի ձգենք հինցած գերեզմանները բանալը եւ հող դարձած ոսկերաց վրայ խօսիլը , եւ պիտի գանք Պօլսոյ մէջ՝ այն հող դարձած ոսկերաց կենդանի որդւոցը հետ խօսելու , եւ իրենց հարց՝ ազգին մէջ բա-



ժամումներ և Գանադան շարեաց և արևից պատ-  
ճառ ըլլալու համար կանգնած Քարեղահան աշտա-  
րակաց պատկերները մտքերնուն աշացը առջև դը-  
նելու : Եւ միւս կողմէն Հայաստանի բերնով « Ս-  
դամ ո՞ւր ես » հարցումը տկանջներնուն հնչեցնելու .  
եթէ լսեցին և իրենց հարց արդիլուած պատուքը ու-  
տելով մերկ մնալնին խոստովանեցան , և չ'աշխատե-  
ցան զմեզ հաւատացնելու որ քանի մը վայրի թղեն-  
ւոյ տերեւներով մերկութիւններնին ծածկուած էր .  
և եթէ իրենց հայրերը խաբուելու շափ տկարութիւն  
ունենալով խաբուեր են , և իրենք ալ՝ դործով ասպա-  
ցուցանեն , թէ միմեանց դէմ՝ Ապէն և Արէլ և դ-  
բայրներ ըլլալու չ'են աշխատիր , այն ատենը մեք  
ալ համրի բերանով կ'անցնինք քովերնուն , դուխ-  
ներնիս խանարհեցնելով և բարեւի նշան մը տալով ,  
իսկ եթէ ոչ , կ'ըսենք իրենց որ՝ Ապէն ըլլալ ու-  
ղելով՝ իւր Արէլ և դբայրն սպաննելու ջանացողին ,  
Վամէք մի ալ չըստիսիր , որ զայն վայրի դազան  
կարծելով՝ զարնէ սպաննէ և նախատական յիշա-  
տակէն զատ ուրիշ բան մը չըթողու աշխարհիս  
երեսը :



ԹՇՈՒՍՈՒ ՍԵՌԻՆ ԴԱՌՆ ԿԵՍՆՔԸ

Յորժամ ծնին երախայք ,  
Արդեօք ինչո՞ւ կ'արձակեն  
Ողորմ ճիչ և աղաղակ ,  
Միթէ վախճաննի՞ն դիտեն ,  
Արդեօք գիտեն որ աշխարհ  
Ունի մէջը կիզիչ հուր .  
Եւ տեղ մի է որ' կեանք , մահ  
Ընձաւ շո՞ւաւ կ'ընեն առևտուր :

Ո՛հ, այն լուի՛ Հայաստանցոց  
Բաժինն է իրենց որդւոց՝  
Որ տանջանայ և մահուան  
Համար կը ծնին միայն :

Հազիւ խանձարուրներնուն  
Կ'արձակեն զանոնք մայրեր .  
Յանկարժ ժանտ պանդխտութիւն  
Կուտայ դահճի հրաւեր :  
Եթէ դժբախտ , ողորմելի՛ ,  
Անտերունչ վտարանդիք ,  
Ըսուիլն հանելուկ լինի ,  
«Են ըսուի Հայաստանցի՛ք :»

Կը լուծուի՛ հանելուկ , վէճ՝ ,  
Զի Հայք են ամենէն խեղճ .  
Օտար երկիր , օտար դուռ ,  
Յե՛րբ մնայ վզերնին ծուռ :

Չկայ հովիւ այն հօտին ,  
Փլած է իրենց փարախ ,  
Հայնափեռէկ կը բացուին  
Սմեն կողմ գայլոց երախք :  
Ազգ , ազինք միահաղոյն  
«Ուսումն է ցաւոց դարման :»  
Կ'ըսեն , կը դիմեն կ'առնուն ,  
Բայց ո՛հ , ո՛ր է Հայաստան :

— Կայ մահուան անկողնոյն մէջ  
Մեծահազան ու անթիկունք խեղճ .  
Թէ տեղէն ուզէ շարժիլ ,  
Կայ դամբան դահաճիւթիլ :



«Ածմ ճարպո 'ի ներքսասոք և արհա-  
-իրո արբաթասոք' արհա-իրո հեթանոսաց  
և ճարպո 'ի հերձո-ած-զաց , և խորհր-  
դականն լէ 'ի միջի , որ խորհրդեր և յարճա-  
րեր 'ի դարբերազմ : »

խորհրդաց :

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԲԵԼԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԵՒ ՊՈԼԻՍ ՀԱՅՈՑ ՄԷՂ

ՀՌՈՎՄԷԱԳԻՍԻՍԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

ՀԱՌԱՋԱԳՈՅՆ Հայոց Պօլիս գաղթելն , որ  
ամենուն յայտնի է , գրեթէ այն ատենի վա-  
ճառականութեան եւ արուեստից իրենց մէջ  
ծաղկելուն պատճառ եղաւ , եւ հետեւապէս  
հարստութեան ալ . բայց այնպիսի հարստու-  
թեան մը՝ որ ոսկի եւ արծաթ ըլլալով քսակնին  
լցուելու՝ սուր եղաւ իրենց ձեռքովը իրենց սիր-  
տը մխուելու : Վասնզի նախարարաց սեղանա-  
ւորութիւնը եւ զանազան շահաւէտ գործոց  
միմեանց ձեռքէ յափշտակելու նախանձները՝  
սկսաւ միմեանց վրայ զրպարստութիւններ ընել  
տալ . իրաւացի թէ սուտ , նենգութիւններ , ճառ-  
նութիւններ եւ շարախօսութիւններ՝ զբհեղեղի



անձրեւի նման միակեանց վրայ կը տեղայնէին ,  
 որոնք կայծակի նման ալ կը վնասէին : Աւ-  
 այս չարիքը աւելի ընդարձակ ասպարէզ մը  
 կ'ունենային . իրենց առջեւ , որ չարէն չա-  
 բաղոյնը առաջնորդեցին Հայոց վրձակը , այս-  
 ինքն՝ Պատրիարքութեան իշխանութեան ե-  
 կեղեցականաց միակեանց ձեռքէ յափշտակե-  
 լու նախանձները : Քանի մը ամիրայ մէկ  
 կողմ մը կ'անցնէին , եւ քանի մը ամիրայ ալ ա-  
 նոնց դիմացը , կ'առնէին իրենց մէջտեղը՝ մէկ  
 մէկ դդմի պէս Պատրիարքոս , մէկ կողմը միւ-  
 սին ըսելով թէ « Ջերինը դդմ'ւմ է եւ մերինը  
 սելիս (Գաճո-ն) : » Եւ նոյնպէս ալ միւս կողմէն  
 « Մերինը սելիս է եւ ձերինը դդմ'ւմ » , պատաս-  
 խանը կ'որոտար : Ահա՛ այս առթիւ , հարուս-  
 տը հարուստին դէմ ունեցած ոխը եւ թշնամու-  
 թիւնը գործադրելու միջոցները 'ի պատրաստի  
 կ'ունենար , ա՛յն միջոցները՝ որոնք յետագայ  
 չարեաց եւ թշուառութեանց դժոխազուն մայրն  
 եղած են եւ տակաւին կ'ըլլան ու թերեւս ալ պի-  
 տի ըլլան : Հասարակութիւնն ալ անոնց ձեռ-  
 քը , անզգայ գործի եղած , եւ կամ հարուստ-  
 ները՝ իրենց հարստութիւնը աղքատ ուսակին  
 քթին օղակ ու շղթայ ըրած՝ կը տանէին շե-  
 կեանէին արջուն պէս ուզած տեղերնին խաղ-  
 ցրնելու : Ասոնցմէ ետեւ կարգը կուգար դժո-  
 խարովայն կոկորդներն ու հաղազները կաշառ-



քով լեցնելու փոյթերնին , եւ ո՛ր կողմն որ քրտա-  
 կին բերանը բանալով տակէն բռներ ու յիշեալ  
 դժոխորովայն կոկորդաց մէջ պարպեր , իսկո՛յն  
 այն կողմին դդումը քաղցրահամ սեխ կը դառ-  
 նար եւ անուշահոտ բուրմունքն ալ՝ վարդին  
 կամ լաւ եւս ըսեմ՝ ամեն գարշ հոտերը էլ Գե-  
 րասանցէր : Պատրիարքութեան իշխանութիւնը  
 ձեռքերնին ձգածնուն պէս , Նաբուգոդոնոսո-  
 րայ թիւը կը բազմանար . դուռով խրոխտու-  
 թիւններնին՝ կուրծքերնին գլուխներնուն աւելի  
 կը բարձացնէր , եւ ո՛վ որ Պատրիարքին եւ ա-  
 նոր կողմնակիցներուն կը հակառակէր , այնպիս-  
 եաց վզին՝ երբեմն փոփոքի էր հաւնեաց շղթայ կ'ան-  
 ցընէր , փոփոքի տան օրիօրաց պարանոցը հաստատած ա-  
 դաս Տանգրուհոտան Տանէտէնէրու պէս : Եւ երբեմն ալ՝  
 աս Տանայն Կողմնակալութեան Տանգրուհոտան Բաժնակի պէս Կանի Տը  
 Կարէր Բրի Կարտանէր ստի՛ն : Երբեմն իւր ու-  
 նեցածներէն եւ ընտանիքէն , գերեզման երթա-  
 լու պէս հրաժարելով՝ դրախտի նման Բանտեր , եւ  
 իւր եղած տեղէն՝ արքայութեան չափ հեռի ,  
 արհաւիրութեան պէս ախտերնէր : Բայց մինչեւ այն ա-  
 տեն , այն ընկճեալ կողմն ալ՝ Պաբրիէլ հրեշ-  
 տակին տալիքն անգամ ուրիշի տալով , ստակ  
 կը հաւաքէր եւ վերոյիշեալ դժոխորովայն կո-  
 կորդաց մէջ լեցնելով՝ կը յաջողէր ըսել տալու  
 թէ՛ « Նեխեցաւ այդ սեխը , պէտք է նետել եւ  
 տեղը ուրիշ մը դնել : » Արսկսէր վերոյիշեալ



պարգևները անդրադառնալ եւ փոխադարձաբար  
 միմեանց անխնայ շնորհութիւն : Ո՛ր կողմն որ Պատ-  
 րիարքութեան իշխանութիւնը ձեռքերնին ունե-  
 նային եւ միւս կողմէն մէկին ձերմակ դոյնով  
 բուբիա (Քասառլէս) ուտելը տեսնէին , դո՛հ չ'ե-  
 ին ըլլար միայն « Աերածը մածո՛ւն է : » պօռալ-  
 նուն , այլ Պատրիարքարանի ժամկոչներով եւ  
 մունեաթիկներով դաբրիէլեան փողը կը հնչեցը-  
 նէին : « Այս ինչ ամիրան պահքը կերա՛ւ , ան-  
 հաւատ է , ֆրէ՛նկ է , կաթողի՛կ է , եւ այսպի-  
 սի անհաւատ մը ի՛նչ բան ունի սուրբ եկեղե-  
 ցին՝ եւ սրբազան Պատրիարքին ընտրուելուն ան-  
 դամ լրբութեամբ խառնուիլ ուզեց . ծեծն ու  
 փետտելը բաւեց , 'ի խա՛չ հան զդա , 'ի խա՛չ  
 հան զդա : » Ասկէց ա՛լ աւելի սոսկալին դործե-  
 լու բնաւ չ'էին դանդաղեր : Պատրիարքը օձի-  
 քը եւ հանդերձը պատուելով՝ կ'ինկնար անոնց  
 առջեւը եւ կ'երթային կառավարութեան բսե-  
 լու , « Տէր իմ , որովհետեւ դուք՝ անարժան ծա-  
 ռաններուդ վրայ վատահոսթիւն ունենալով Հա-  
 յոց հաւատարիմ ազգին Պատրիարքութիւնն  
 ինձի տուիք , ուստի անարժան ծառայնիդ ձեր  
 իմ վրաս ունեցած վատահոսթեան պարտաւո-  
 ըութիւնս կատարելու համար , ահա՛ եկի ձեզի  
 յայանելու՝ վկայութեամբ ժողովրդեանս մեծին  
 եւ փոքունս որ այս ինչ անձը անհաւատ կեալու-  
 է , կաթողիկ ֆրէնկ է , եւ ֆրէնկի լրտես ըլլա-



Լուին է որ այնքան հարատու թիւն դիզած է . եւ  
 այս ինչ անձինքներն ալ իրեն ընկերներն են :  
 Եթէ ասոնցմէ Կառավարութեան վաստ մը դայ,  
 զմէզ պատասխանատուութենէ ազատ թողէք :  
 Մեք չ'եմք խառնուիր : » Արատիպէին բռնի մէկ  
 զմէկ Հայութենէ հանել , ( բայց եթէ ողջ մնա-  
 յին ) : Այն անմիտները կրկարծէին որ Հայու-  
 թիւնը Պարսկութեան դարձնելու ջանացող մու-  
 դերը ջնջուած ըլլալուն ա՛յլ վախնալու տեղ չը-  
 կայ : Ըսուած է թէ՛ « Քայլը մտախուզուտ օրը  
 կը սիրէ : » Այս գայլերը՝ Հայոց Առեքիներանց  
 թագաւորութեան ժամանակէն՝ քանի մը ան-  
 դամ Հայաստան յարձակած էին , մերթ գայլի  
 պէս եւ մերթ օձու պէս սողալով , եւ բաւական  
 Հայ ալ թաւաւորած էին : Եւ երբեմն Առե-  
 քիներանց թագաւորներէն վանուելով , թունա-  
 ւորածնին թողած էին Հայոց մէջ , մինչեւ որ  
 տեսան թէ՛ անոնցմէ մէկ քանին Պօլսոյ մէջ կը  
 գտնուին եւ Հայք ալ , վերոյիշեալ կերպով ,  
 զիրեար անհաւատ եւ ֆրէնկ ու կաթոլիկ կ'ը-  
 նեն . դարձան Հայոց վրայ՝ թոյներնին եւս ա-  
 ռաւել զօրացուցած : Այս սողալով գալողները  
 ձեռքէն ըսուածներն էին՝ որոնց անունը Հայե-  
 րէն Յիսուսեան կը թարգմանուի . բայց այնպի-  
 սի անուն մը՝ որ սատանային՝ հրեշտակ , եւ օ-  
 ձուն՝ աղաւնի , ըսուելուն կը նմանի : Ասոնց ա-  
 մեն մէկ քայլափոխը՝ որ Եւրոպիոյ քաղաքաւ



կիրթ ազգերով լեցուն աշխարհին երկրին երկ-  
րաշարժ եւ շունչերնին ալ որ յերկնից որսառմ  
կը պատճառէր, ի՞նչպէս այն ատենի Հայոց ա-  
մեն տեսակ չարիքներով եւ թշուառութիւններ-  
րով կուրցած ու տկարացած ժողովրդեան ձեռ-  
քէն բռնելով՝ չ'էին կրնար տանիլ ուզած տե-  
ղերնին կապել կաշկանդել: Անոնց «Ներուպացի  
կ'ընենք զձեզ», ամեն տեսակ բռնութիւններէ  
կ'ազատիք:» ըսելուն վերոյիշեալ տանջանքնե-  
րն ու հակառակութիւնները կրող Հայոցմէ ո՞-  
րը չ'էր համբուրեր անոնց ձեռքն ու բերանը. եւ  
քանի որ Հայոց եկեղեցականները՝ բանադրանք  
եւ բանտի բանալի կը ցուցնէին ու անոնք ալ որ  
առատ առատ ներողութիւն եւ արքայութեան  
բռնաւի:

Հայոց Պատրիարքարանը քանի որ մինչեւ ամ  
սազլուխ իրեն մէջ չտանոյ պէս նորանոր փոփո-  
թիւն առած Պատրիարքներ կ'ունենար, հետեւա-  
պէս Հայոց մէջ ալ՝ մինչեւ տարեգլուխ Տաճկի  
կրօնաւորաց (աէրձեշ) ձեռքին համբիշին (Բէսալեհ)  
հատերուն թուոյն չափ կուսակցութիւններ եւ  
բաժանումներ կ'ըլլային. Նւ. քանի որ այնպիսի  
բաժանումները՝ մեծ մասին մասին ալ եւ բաժ-  
նուածներուն ալ, որ տկարութիւն եւ անզօրու-  
թիւն կը պատճառէ, եւ քանի որ այն բաժան-  
մանց մասունքներն ալ՝ աւազի հատի պէս էին  
զիրենք վարող գեացոյ յորձանքներուն առջեւը,



այլ անկէց վերջը ո՞ւր կրնաս Պարո՞ն Աղամ դու  
զանոնք փնտռել եւ անոնք ալ ի՞նչ գիտեն թէ՛  
ուր պիտի տանի զիրենք վարող յորձանքները :  
Ժողովրդեան մը մէջ երբ որ կրօնի եւ սովորու-  
թեանց փոփոխութիւն մ' ըլլայ , քանի որ  
մնայ , փոխանակ փտտելու , եւս առաւել կ'ար-  
մատանայ եւ կը զօրանայ . ու իրենց արեանը  
պէս իրենց կ'ընտանեանայ եւ կը սեպհականուի , որ  
եթէ անոր դպչելու ըլլաս , իրենց անձին զնասելու  
համար դպածի պէս կ'ըլլաս : Ինչպէս որ Մովսէս  
մարդարէին Նգիպտոսէն Նբրայեցիները ազա-  
տելով տարած ատենը՝ լալով կըտրանջային , թէ  
« Ինչո՞ւ այս մարդը զմեզ հանեց Նգիպտոսէն  
որ պրաս (փրաստ) եւ սոխ ու սխտոր ուտելէ զըր-  
կուեցանք : » Գերս Թողոց Գ.Լ. ԺԱ. 6 : Տնով եւ  
ընտանեօք գերութենէ եւ ա'յնպիսի գերութե-  
նէ ազատուիլը , տես թէ ժողովուրդը պրաս եւ  
սոխ ու սխտոր ուտելէ ո՞րքան ստորին եւ վար կը  
համարի : — Պատճառը ի՞նչ է . — Աւանդի անոր  
մէկ մը սովրեր է : Պարո՞ն Աղամ , անոնք ան-  
գամ մը՝ Նբրայեցւոց սոխ ու սխտոր ուտելէ  
չըզրկուելու համար Նգիպտոսէն ելնել չ'ու-  
ղելնուն պէս քու բռնադատելէդ ինքզինք-  
նին Աարիւրինթոսին մէջ փակեր էին . եւ  
տակաւին ներս մտնելու համար երամ ե-  
րամ վազողներուն ալ կ'ըսէիր թէ՛ « Աեցէք ,  
մ'երթար : Գուք հաւատքի հիւանդութիւն ու-



նիք եւ ես ալ ձեր բժիշկն եմ : » Եւ անոնք ,  
 « Դու դահիճ ես : » կ'ըսէին . դու , « Դեղս աւ-  
 ոտղջարար է : » կ'ըսէիր . եւ անոնք , « Թոյն է : »  
 կ'ըսէին . ի՞նչպէս կրնայիր այնպիսեաց մօտե-  
 նալ , քանի որ թեւերնուն քարշող ու օգնող ալ  
 որ կար :

Եւ քանի որ ետեւնին կըդառնային , թէ  
 դու զիրենք բռնելու համար կատաղութեամբ  
 կըվազէիր , միթէ եւս առաւել քեզմէ իրենց  
 գալիք մնասի կասկածնին չ'էր աւելնար . եւ ա-  
 ւելի սաստկութեամբ չ'էին փութար փախչիլ :  
 Եւ երբ որ վազելու մասին դու անոնցմէ զօրա-  
 ւոր եւ յաջողակ դտնուելով՝ հասար ու բռնեցիր՝  
 կիրքդ ելած , երակներդ ուռած , քաղցրութիւ-  
 նրդ դառնացած , կ'ուզէիր խօսք հասկցնել եւ  
 խօսելուն կերպն ալ որ չ'էիր գիտեր . եւ մինչեւ  
 հիմայ անգամ՝ ինձի խրատ տալու ելած ատե-  
 նրդ , քանի որ գլուխդ փարատես՝ մէջէն դդմի  
 կուտերուն ձայնը զանգակի պէս որ ականջս կը  
 զօղանչեն , արդեօք այն ատենը թնդանօթի  
 ձայնին պէս չ'էր այն ձայնդ . եւ եթէ դու ալ  
 ըլլայիր՝ կըհաճէիր ականջդ թնդթանօդին բե-  
 րանը դնել . անոր անոյշ ձայնը պիտի լսեմ ըսե-  
 լով : Աւրեմն քիչ մը մտադիր եղիր եւ համոզ-  
 ուէ փորձովդ , որ ծեծելով իւր ցրուած հօտը  
 ծեծելով հաւաքելու ելնել հովւէն՝ փայփացող  
 գայլն աւելի դիւրաւ կըյաջողի տանիլ իւր որ-



ջը եւ որջէն ալ որկորը եւ որկորէն ալ որովայնն  
 իջեցնել: Եւ քու այնչափ ովիկանոսի պէս փրբ-  
 փրբելով վազելիդ, ու վերջն ալ՝ կոնքի մէջ եղած  
 ջրի պէս մնալի միտքդ բեր, Սեք՝ Հայոց մէջ  
 հիմնուած Հռովմէադաւանութենէն ֆրաս չը-  
 կայ, չ'ենք կրնար ըսել. քանի որ Արեւելքի մէջ  
 ամենէն քիչը, ասկէց հարիւր յիսուն տարուան  
 կը կարօտի որ ըսուի, թէ ազգութիւնն այլ է եւ  
 հաւատքն այլ: Եւ քանի որ այս պատճառաւ  
 ժողովրդեան մէջ եղած պաղութիւններն ու հա-  
 կաւակութիւններն ինչ աստիճանի ըլլալն ալ որ  
 դիտենք, կրնանք սրտի ցաւով այս ճշմարտու-  
 թիւնն ալ ըսել, որ թերեւս Հայոց սիրտը այս  
 մահառիթ վէրքը պիտի կրէ հարիւր յիսուն տա-  
 րիէն ալ աւելի: Այս վէրքը՝ ուսման եւ կրթութեան  
 սպեղանիով կրնայ բժշկուիլ որուն ապացոյցը  
 Եւրոպացոց վրայ կը տեսնուի. բայց Հայոց  
 մէջն ալ՝ ուսումն ու կրթութիւնը այնչափ կը  
 տեսնուի, որչափ որ մարդիկ երազի մէջ կամ  
 երեւակայութեամբ ինքզինքնին հարստացած  
 տեսնեն: Եւ աւելի հետեւեալ ապացոյցը զմեզ  
 կը վստահցնէ եւ յուսահատ կը թողու, երբ որ  
 հարիւր վաթսուն եւ մէկ տարիէ՝ ի վեր Արեւմտ-  
 կոյ Միսիսթարեան միաբանութեանը՝ Եւրոպիոյ  
 եւ ուսման ու կրթութեան մէջ միանգամայն  
 գտնուելովն, տեսնենք որ Նոյ նահապետի կեն-  
 դանութեան ժամանակն՝ Հայոց Հայկնախահօ-



ընն ու Քերայ հետ եղած պատերազմին Հայկ  
 դիւցազն անուն վիպասանութիւնը դրած ատեն  
 նին՝ մէջը Հռովմէադաւանութիւն կը հոտեցը  
 նեն , Մխիթար արքայներին հրեշտակին միջ  
 նորդութեամբն՝ Հայկին սրտին հետ տեսութիւն  
 ընել տալովնին : Ա՛ ուզես վհատէ , կ՛ ուզես յուսա  
 հատէ , անոնց սովրած ուսումն ու կրթութիւնն ալ  
 այս է . եւ տալիք ուսումննին ու կրթութիւննին  
 ալ այս է : Ահաւասիկ յառաջասացեալ կերպիւ  
 Պօլսոյ Հայոց ամիրաներն ու Պատրիարքութիւ  
 նը իրենց եպերելի ընթացքովն ա՛յն աստիճանի  
 չարիքը զայրացուցին որ՝ իրենց վանածն ու աք  
 սորածները որոնք որ իրենց եղբայրներն ու որ  
 դիքն էին , այժմ իրենց իբր ռիսերիսը եւ ոսոխն  
 ու թշնամին՝ եկան իրենց դիմացը , եւ օր չ՛անց  
 նիր որ իրարու ահուայ կրճտելնուն եւ այլոց ալ  
 կրճտել տալերնուն ճայնը չըլսուի : Եւրոպա  
 ցին ալ դրեր է անոր ծոցը տեսրակ . հաշիւն օր  
 քան զօր եւել պիտի բերես ըսելով . եւ մէկ կող  
 մէն ալ մտրակ . եկէք միմեանց հակառակ  
 տեսներնք ո՛վ կ՛առնէ Հոմերոսի գորտանց եւ մը  
 կանց մարտին յաղթանակ եւ ճակատին պսակ :  
 « Խօսեցարո՛ւք զճշմարտութիւն իւրաքանչիւր  
 ընդ ընկերի իւրում , զի եմք միմեանց անդամք : »  
 Ե՛է . Գ . 25 :




ՀԱՅՈՑ ՊՕԼՍՈՅ ՄԷՉ ԲՈՂՈՒԹԱԿԱՆՈՒԹԵՆԷ  
ԽՍ.ԲՈՒԵԼՆԻՆ

Բողոքականութիւնը Պօսոյ մէջ, գրեթէ  
անցաւ որ ուղեւորի մը պէս Հայոց գիմադն ե-  
լաւ, եւ ա՛յնպէս իրեն մարդաորսորդական  
կերպերովը վարպետօրէն հեղութեամբ բարեւ-  
տուաւ, որ Հայոցմէ՛ անոր տուած բարե-  
ւը գողու բարեւ ըլլալը չըզխանալով սիրով  
ընդունեցան: Եւ երբ որ իրենց ըսաւ թէ՛ «Ս.ՍԴ  
ճամբան սխալ է եւ խորտուբորտ. եկէ՛ք ե-  
տեւէս որ տանիմ զձեզ ուղիղ ճամբայէ մը:»  
Ընկերացան միամտաբար, չըզխանալով որ գը-  
նացածներնին գողու կաղաղ մի է:


Ամերիկայի նոր գոյն տալով վաճառած կամ  
ձրի տուած կրօնքին փայլուն երանգներէն ազ-  
նախադու թիւն մը ցոլանալով Պօսոյ մէջ Հա-  
յոց ոմանց աչուրներուն, գիւրաւ խաբուեցան  
զայն փափաքելով առնելու, մինչեւ որ քիչ ժա-  
մանակէն գունաթափ ըլլալով ոմանք ձգեցին  
եւ ոմանք ալ զգեստ շինած դեռ 'ի ներհաստ  
եւ արտահաստ կրղղենուն: Պօսոյ Հայոց այս  
պէս խաբուին ու գիւրահաւանութիւնը. խրա-  
խոյս տուաւ Գահճարաց՝ որ Հայաստան ալ եր-  
թան, յուսալով որ՝ հոն Հայոցմէ աւելի տկա-  
րամիտներ եւ գիւրահաւաններ կրղանեն խա-  
բելու: Բայց մեք Հայոց կղերին անուսում ըլ-

4502 / 313. 352-2004





լալուն եւ շոր ու ցամաք գիտութիւն մ'անգամ  
 չ'ունենալուն կրնանք տալ գլխաւոր յանցանքը ,  
 որ չ'են գիտեր իրենց ժողովրդեան ինչ աստի-  
 ճանի գիւրահաւան ըլլալն , եւ եթէ գիտնան  
 ալ , տալիք խրատներնին աւելի դայթակողու-  
 թիւն կը պատճառէ կրօնական մասին բծախնդիր  
 անձանց , քան թէ հաստատամտութիւն եւ սէր  
 իրենց հայրենաւանդ հաւատոյն : Սակայն կըր-  
 նա՞ք ալ ուրանալ որ Մատթէոս Աթոռղիկոսը  
 այդ մասին բաւական չ'է աշխատեր : Պէտք  
 եղաւ անգամ մը ըսել , թէ ձգէ՛ Պարոն Աղամ ,  
 այդպիսի քանի մը վայրի թղենւոյ տերեւներով  
 այդ մերկութիւնը ծածկուելիք բան չ'է : Թող  
 կղերը իւր սովորական ալէլուէն ուրիշ բան չը  
 սովրի եւ չ'ուզէ որ ժողովուրդն ալ ո՛չ անկէց ու-  
 ըրիշ բան լսէ եւ ո՛չ ալ սովրի . . . : Անցնինք ա-  
 ուաջ աստնց հետը ուրիշ ալէկոծութեանց մէջ  
 ընկղմելոց եւ հին Հռովմայեցւոց գերիները բըռ-  
 նելով կրկիսի մէջ զիրեար ջարդել տալուն նկա-  
 ռա գրութիւն ընելու , որոնց գերեւվարութիւնն  
 ալ որ կը բի՛ն եւ ամբարայտայեցոց դիւցազնահան անհ-  
 նանու-իբու-լէանցը արդի-նքն է :



## ՀԱՅՈՅ ՊՕԼՍՈՅ ՄԷՋ ԱԼԷԾՈՒՓ ՏԵՏԱՆԻԼԸ

Պոլիս , Տաճկաց տիրելէն առաջ մեծ վնաս-  
 ներ պատճառած է Հայաստանին , եւ Տաճկաց



տիրելէն վերջն ալ պատճառած փաստերը սա-  
 կաւաթիւ չ'են, որոնց գլխաւորները Հայոց  
 ձեռքովը գործուեցան եւ տակաւին կը դործու-  
 ին ու թերեւս գործելու ձեռքերն ալ դժուար  
 պիտի պակսին, որ ընդհակառակն՝ Հայք շատ օ-  
 գուտներ քաղելու միջոցներ ալ ձեռք ձգեցին եւ  
 կրնային ձեռք ձգել եւ կրնան դեռ ձգել. բայց  
 ձեռք ձգած միջոցներնին, տղու նման ճնճողուկի  
 պէս ձեռքերնուն թռուցին եւ կը թռցնեն ու ետ-  
 եւէն ալ ո՛չ ամառս մը ըսին եւ ո՛չ ալ կ'ըսեն: Պոլիս  
 Հայաստանի հարուստները եւ վաճառականնե-  
 րըն ու արուեստաւորները իրեն մէջ գաղթեցը-  
 նելու ստիպեց. եւ մնացած ժողովուրդն ալ  
 տաժանելի պանդխտութեան երկաթեայ լծին  
 տակ մաշեցնելով՝ գալու եւ ստակ ու ապրուստ  
 ճարելու ստիպեց, որով անհուն Հայոց բազմու-  
 թիւն մը եղաւ Պոլսոյ մէջ, եւ որուն արդի գաղ-  
 թականաց թիւը, երկու հարիւր յիսուն հազար  
 կը հաշուէն: Անցեալին մէջ այս գաղթականու-  
 թիւնը Հայաստանի օգուտ մը չ'ենելէն դատ-  
 կարծես թէ Հայութեան մէկ քանի բեկորներն  
 ու մասունքները շարկած, բերաւ Պոլսոյ ծովը  
 նետելու, որ իրեն ապագայ սերունդը՝ անոր  
 յատակը սուղելով՝ մաս մաս դուրս հանէ, (ե-  
 թէ չըխեղդուի): Պոլսոյ Հայոց գաղթականու-  
 թիւնը՝ փոխանակ ջանալու որ ինքն բարգաւա-  
 ճի եւ հետեւապէս Հայաստանն ալ բարգաւա-



ճէ , ընդհակառակն իրենց սիրելին եղաւ մեղ-  
 կութիւնք , հողերնին եղաւ զեխութեանց մէջ  
 լողալը եւ նախանձու ու փառասիրութեանց վը-  
 հերուն վրայէն միմեանց դէմ ցատկելու մրցի-  
 ք , որ ետ ընդ ետ իրենց կմախներով լեցուցին  
 այն վհերը : Պօլսոյ մէջ Հայոց բարուց ապակա-  
 նութիւնք՝ Հայ անուան չլվայելեցնելու աստի-  
 ճանաւ՝ առանց զննելու տեսնուելու չափ պար-  
 զեցաւ : Արբեցողութեան եւ զանազան վնասա-  
 կար մոլութեանց՝ երկու մարդէն մէկը կրնայ  
 դաս տալ եւ վարժապետութիւն ընել , որոնք  
 այնպիսի դասեր են , որ մարդուս կեանքը իրեն  
 հաճութեամբը կը դողնան եւ կը կորզեն իրմէ :  
 Հարուստը՝ իւր դրօսանայ եւ զարդուց ու պըճ-  
 նուելու միջոցները եթէ գիտնայ թէ դժոխքը կը  
 գանուի . երբէք չըդանդաղիր զանոնք երթալու  
 գանելու , եւ այս մասին աղքատին հաւն ( Բա-  
 վա ) ալ հարսատին սաղին ածած ձուին հաւա-  
 սար ձու ածելու ջանքով՝ ինքզինքն խղելու  
 քաջութիւնն ունի : Պօլսոյ մէջ Հայոց նորա-  
 ձեւութեան ( Տօրա ) եւ աշաֆրանկայի ետեւէն սի-  
 րահարած վազելուն վրայ սա հետեւեալ օրի-  
 նակը մէջ բերենք , որ հայերույ պէս ինքզինքնին  
 մէջը տեսնեն : Եւրոպիոյ մէջ հասարակ ժողո-  
 վուրդէն անձ մը , քիչ մը արբեցած եւ զուար-  
 թութեամբ տունը երթալու ատեն՝ իւր ծանօթ-  
 ներէն մէկն ելնելով դիմացը՝ զայն ողջունելէն



վերջը, տեսնելով անոր կարգէ գուրս գուար-  
 թութիւնը, պատճառը կը հարցնէ: «Քանի մը  
 գաւաթ շերտօղի ( փռանչ ) խմած եմ, անկէց է  
 պատճառը: » կը պատասխանէ հարցեալը: Ուս-  
 տի կ'ըսէ հարցնողը, «Աղաչեմ ինձի ալ ցոյց  
 տուր, որ երթամ այս երեկոյ տունս զայն շի-  
 նեմ ու խմեմ եւ ձեր շնորհիւր գուարթութիւն  
 մը վայելեմ: » «Յոյժ լաւ: » կ'ըսէ ցոյց տուողը,  
 «Նախ որճեփեղիքին ( ճէղչ ) մէջ ջուր լեցուր եւ  
 կրակին վրայ դիր, մինչեւ որ ջուրը եռայ. այ-  
 նուհետեւ ջուրը բաւական անուշցնելու շափ  
 շաքար լեցուր մէջը, ապա անոնց համեմատ  
 շաքարօղի ( բոճ ), եւ վրան ալ Հնդկարնկոյդին  
 փոշոյ պէս մանրացուցուածը ցանէ. ու յետոյ  
 քիչ մ'ալ լիման քամէ ու խմէ: » Հարցնողը  
 շնորհակալութիւն մը մատուցանելով մինչեւ իւր  
 տունը կը վազէ եւ որճեփեղիքը ջուր լեցնելով կը  
 ըսէր դնելէն վերջը, տունը շաքար չը գտնուե-  
 լով տեղը քաղցու ( փռանչ ) կը լեցնէ, եւ շաքա-  
 րօղի ալ չ'ըլլալով անոր տեղն ալ օղի կը լեցնէ.  
 կարգը Հնդկարնկոյդ լեցնելու գալով եւ այն ալ  
 չ'ըլլալով սեւ պղպեղ ( սեւ փռանչ ) կը դնէ եւ  
 այն ալ, անոր տեղը կը դորձածէ. եւ լիման ալ  
 չը գտնուելով անոր տեղն ալ քացախ կը լեցնէ  
 ու կը խմէ: Քառորդ մը ժամանակ չ'անցնիր  
 խմելէն ետեւ, մէկ մ'ալ նայիս սիրտը կը խառ-  
 նուի եւ խմածը փսխելով փոխանակ գուարթա-



նալու կըհիւանդանայ եւ մէկ երկու շաբաթ  
 անկողինը պառկելէն ետեւ, քիթն ու բերանը  
 կապած եւ ցուպի մը յենած, տունէն դուրս ել-  
 նելու ատեն, յիշեալ ըմպելիքը ցոյց տուողը  
 դէմը կ'ենէ, եւ այն ալ անոր հիւանդութիւ-  
 նը տեսնելով կարեկցելէն վերջը, պատճառը կը  
 հարցնէ: «Մի՛ հարցնէր կ'ըսէ հիւանդացեա-  
 լը, այնպիսի ըմպելիք մը ցոյց տուիր ինձի որ  
 այսօր երկու շաբաթ կ'ընէ զիս անկողին ձգած  
 է:» եւ աչքերը խոժուեցնելով երեսը կըդարձը-  
 նէ: Առողջը՝ «Թողութիւն կըխնդրեմ կ'ըսէ  
 բարեկամ, բայց եթէ կարելի է, սա ձեզի ցոյց  
 տուած ըմպելիքս ի՛նչպէս որ շինեցիք, ըսէիք  
 ինձի:» Արսկսի հիւանդը դրդրալով եւ դանդա-  
 տելով ըսել, թէ «Նախ սրճեփելիքին մէջ ջուր  
 լեցուր եւ կրակին վրայ դիր չ'ըսի՞ք. ես ալ  
 նոյնպէս ըրի: Եւ յետոյ շաքար լեցուր չ'ըսի՞ք.  
 շաքար չըկար տունը՝ անոր տեղը քաղցու դրի,  
 միթէ այն ալ անոյշ չէ՞: Շաքարօղի ալ չըկար,  
 անոր տեղն ալ օղի դրի, միթէ այն ալ սղել-  
 եաց ըմպելիք չէ՞: Նաեւ Հնդկարնկոյզ վրան  
 ցանել պատուիրեցիք, անոր տեղն ալ պղպեղ  
 դրի, եւ լիման ալ չըդանուելուն, քիչ մը քա-  
 ցախ լեցուցի եւ խմեցի: Բայց խմածիս պէս,  
 իսկոյն սիրտս խառնուեցաւ, փսխեցի եւ ահա  
 հիմայ այս վիճակիս մէջ ինկայ:» Այսպիսի պա-  
 տասխան մը լսելով ըմպելիքը ցոյց տուողը, զար-



մաղմախք կ'ըսէ, «Բայց բարեկա՛մ, իմ ձեզի  
 ցոյց տուած ըմպելիքիս ու ձեր շինած ըմպելի-  
 քին մէջ, միայն շուր մը կայ իմ ըսածներէս,  
 միւսներն ամենն ալ բոլորովին իմ ձեզի ըսածներ-  
 րուս հակառակ բաներ են:» Պօլսոյ Հայոցնորա-  
 ձեւութիւնը, ալաՔրանհայն, յիշեալ մարդուն շինած  
 ու խմած ըմպելիքէն տարբերութիւն չ'ունի. այն  
 ըմպելիքին ջրոյն պէս անուն մը միայն կայ ալաՔրան-  
 հայն: Չղեատներն Յերոսոպոլսեան ձեւի մտեր են.  
 Բայց գլուխները եւ մտքերն ու սրտերը ընդհակա-  
 ռակն են: Պօլսոյ ժողովուրդը նորաձեւութեանց  
 եւ ալաՔրանհայն ետեւէն կրփազէ, որ անով պնծի  
 եւ զուարթանայ ու հրճուի, յիշեալ անձին  
 զուարթանալ ու զելուն պէս, բայց իրենք ալ  
 շինելուն եւ հազնելուն ու Յերոսոպոլսոց պէս  
 վարուելուն կերպը չըզիտնալով, պնծուելու եւ  
 զուարթանալու ու հրճուելու գինովութենէն  
 չքաւորութեան անկողինը ինկած ատեննին՝ Յե-  
 րոսոպոլսին բարձրաձայն պիտի ըսէ, «Իմ ձեզի  
 ցոյց տուած ալաՔրանհայն» դուք միայն անտի  
 զարդերն առեր էք:» Պօլսեցիք թիթեռան պէս  
 Յերոսոպոլսոց զարդուց եւ պաճուճանաց հրոյն սի-  
 րահարեր են, որուն մէջը պիտի ինկնին եւ խան-  
 ձին: Բայց մեք կըցաւինք որ Պօլսոյ Հայոց հետ  
 Հայաստանցոյմէ ալ այսպիսի վաստակար մո-  
 լութեանց հետեւողները կըբազմանան: Պօլ-  
 սոյ Հայոց վաճառականութիւն ալ՝ որ աշ-



խարհիս ամեն կողմէն տեսնուելու բարձ-  
 րութեամբ Պօլսոյ մէջ հոյակապ շէնքի մը պէս  
 կառուցուեցաւ, եւ ահա հիմայ, ամեն մար-  
 դու հասակէն վար ու ցած փլատակները ան-  
 տարբեր աչօք չ'են տեսնուիր: Ներուպիոյ ճար-  
 տարութեանց առջեւը երբ որ Տաճկաստանի  
 դռները բացուեցան, այն հոյակապ շէնքն 'ի  
 հիմանց քակուելու զօրաւոր մեքենայներն ալ  
 հետերնին բերուեցան, որոնք քիչ ժամանակի  
 մէջ կարողացան հիմն 'ի վեր տապալել այն հո-  
 յակապ շէնքը եւ անոր ներքեւը թողլով մէջը  
 բնակողաց մեծ մասը. եւ դուրս ելնող ազա-  
 տողներն ալ չըկրցան կառուցանել զայն դարձ-  
 եալ, քանի որ չ'էին դադրեր քակող զօրաւոր  
 մեքենայներուն գործողութիւնը. եւ դուրս  
 ներկայ վիճակաւ ալ այն մեքենայներուն  
 քակելու գործողութիւնը արդիւնքը եւ դարձ-  
 եալ կառուցանելը անկարելի պիտի ըլլայ:  
 Յոյնք ալ որ Պօլսոյ մէջ Հայոց վաճառականու-  
 թեան հսկայութեամբ հետ մարտնչելու համար  
 երախայ մի էին դարձած, Ներուպիոյ ուսման  
 ու կրթութեան զէնքերովն սպառազինուելով  
 նոյն զէնքերէն մերկ եւ քնոյ մէջ գտնուելով  
 Հայոց վաճառականութեան հսկայութիւնը,  
 դիւրաւ յաղթեցին: Հայք ու շտանոթացան ըն-  
 կերութեամբ գործելու ուժոյն ու զօրութեան  
 հետ մինչեւ այն ատենը՝ որ Յոյնք սերտ բարե-



կամութիւն եւ մտերմութիւն հաստատուեր էին  
 այն ուժոյն ու զօրութեան հետը : Թէպէտ եւ  
 Ազգային գործոց մասին արդի Պօլսոյ Հայերը  
 ընկերութեամբ գործելու ջանք ունին , բայց  
 ընկերութեամբ գործելու ջանք ունեցողները  
 սակաւաթիւ են , եւ իրենց սակաւաթիւ ըլլա-  
 լուն չընայելով՝ չափազանցութիւն մ'ըրին , որ  
 կարողութիւննին զանազան գործոց մասերու  
 վրայ բաժնելով՝ տկար գտնուեցան ամեն մա-  
 սանց մէջ : Ամեն կարեւոր գործոց կ'ուզեն մէկ  
 մէկ ընկերութիւններ կազմել . ո՛չ , բարեկա՛մք ,  
 այժմ պարտ է ձգել ամենայն կարեւոր գոր-  
 ծոց ընկերութիւններ կազմելը , այսինքն կարե-  
 ւորներէն մէկ քանի ամենակարեւորները զա-  
 տել եւ որոշել ու անոնց վրայ ըստ արժանւոյն  
 աշխատիլ : Եւ այն գործոց մէջ՝ ձեր եղանակ-  
 ները պէտք է այնպիսի պարզութիւն մ'ունե-  
 նան որ՝ Հայաստանցոցմէ ալ ոմանք զգան եւ  
 գան շուրջերնիդ պարեն , ու իրենք ալ կամաց  
 կամաց սովրելով՝ ձեզի հետ միաբան երգեն .  
 այն ատենը ձեր եղանակները ընդհանուր Հա-  
 յաստանցոց ալ զգալի եւ ախորժ հաճութեամբ  
 երգելի ըլլալով՝ արդիւնք ծնելէ ամուլ ալ չը  
 մնար այսպէս : Իսկ մեք այժմ չ'անցնինք առանց  
 ըսելու Պօլսոյ Հայոց անցեալ ժամանակին մէջ  
 ունեցած հարստութեանը եւ ներկային չքաւու-  
 թութեանը վրայ , թէ՛ ներկան անցելոյն առողջու-



թեանք եւ կենդանութեանն ու պարատութեան  
 նր չորցած կմախքն է, կամ ժողովրդեան մէկ  
 մասին համար ալ տերեւաթափ ծառ մի է, որ  
 եթէ այս դարնան եղանակին աղէկ դարման  
 ուի, կրնայ բացուելով ալ պողատու ըլլալ.  
 Ինչպէս որ դարունը՝ որ թին հին ճիւղերը եւ  
 սատերը յօտելով եւ մաքրելով եւս առանել  
 պողաբեր կ'ընեն այգեգործք: Ո՛ւր է Հայոց  
 այն անհուն բաղմութեանը Պօլսոյ մէջ, վա-  
 ճատականութեամբ եւ զանազան արուեստա-  
 ւորօք ունեցած ճոխութիւնը, որոնց համբա-  
 ւը՝ որ Հայոց դիւցադուններէն աւելի Հայ ա-  
 նունը տիեզերահռչակ ըրած էր: Բայց աւագ,  
 Հայք Պօլսոյ մէջ՝ միշտ ունեցածներնին կոր-  
 սրնցնող անհողութիւնը՝ ձեռքէ չըձգեցին: Պէտք  
 չ'էր արդեօք որ Պօլսոյ Հայոց մէջ իրենց ամե-  
 նէն կարեւոր Սղդային գործածական լեզու մը  
 ունենային որն որ այսչափ անհուն բաղմութենէ  
 մը միշտ կրպահանջուի իբրեւ իրենց անդառնա-  
 լի պարտականութիւն մը: Այսանդի իրենց դաղ-  
 թականութիւնը եւ դաղթած տեղերնին (Պօլիս)  
 Նեհաստան եւ այլ զանազան օտար երկիրներ  
 դաղթող Հայոց պէս ալ չ'էր, եւ անոնց պէս ալ  
 Հայաստանի Հայոց հետ հաղորդակցութիւննին  
 կարուած չ'էր: Պարտպանները նկարագրել  
 հարկ չ'է. միայն այսչափ լանք որ՝ Հայք Տաճ-  
 կոց կոտակից չ'ըլլալուն եւ միմեանց հետ խը-



Կամ թիւն չ'ունենալուն՝ ազգութիւննին չը-  
 կորսուի շուտ անոնց մէջ, բայց երբոր լեզուն  
 կորսուի, լեզուոյն տունը ( ազգութիւնը ) չը-  
 վիչիւր, քանի որ քարուկիւր ալ չ'է, եւ կամ լե-  
 զուն որ իրեն բնակարանը երբեմն վարձու տա-  
 լու տեղը վաճառէ, ( բայց ասոնց վաճառածը  
 ճրի տրուիլ ըսել է ) անբակարան չըմնար. Լա-  
 մարթիներ հետեւեալ կերպով կը լինէ. « Ազգ մը  
 որ ալ ոչ երգել գիտնայ եւ ոչ գրել, ոչ խօսիլ,  
 աշխարհիս երեսը չըկայ ըսել է: » Եւ քանի որ  
 Պօլսոյ Հայոց մէջ ալ այս ամենակարեւոր իրենց  
 ազգութիւնը պահող միջոցներուն հակառակը  
 գործուել է եւ դեռ գործուելն ետ կենալ որ  
 չ'են ջանար, կը դարձանայ իրենց վրայ խորհո-  
 ղը, այս տարակուսանայ մէջ ընկղմելով թէ  
 արդեօք Պօլսոյ Հայոց այս անհուն բազմութիւ-  
 նին ալ ուրիշ այլ եւ այլ օտար երկիրներ դադ-  
 թող Հայոց պէս, Պօլսոյ գերեզմանայ մէջ քա-  
 ըերը եւ գրեանց մէջ անունը միայն թողէն  
 գերծ պիտի կարենա՞յ մնալ եւ փառաւոր ապա-  
 գայի մը պսակադիրը ըլլալ: Ժողովուրդը Հա-  
 յոց գրաբար լեզուն չըհասկընալէն դատ աշ-  
 խարհարարն ալ ազաւաղ եւ կամ բոլորովին  
 եղծուած ու խանդարուած եւ հաճկերէնով  
 խառնուած ըլլալուն՝ ամօթ կը զգայ ամեն տեղ  
 գործածելու: Եւ մաքուր աշխարհարաւ գիտ-  
 ցողներն ալ չըհասկըցողներուն հետք՝ չըհասկը-



ցողի պէս գործածել չ'ուզելնուն , չ'են խօսիր  
 ուր որ պէտք ըլլայ , որով չըգործածուելուն եւ  
 չըտարածուելուն արգելքները առաջ կուգան :  
 Այն աստիճանի լեզուի օտարամուլ եղան Հայք  
 Պօլսոյ մէջ՝ որ իրենց լեզուաւ եւ յոյժ պարզ ու  
 ճով օրագիրներ եւ լրագիրներ հրատարակուե-  
 լով հանդերձ , դարձեալ հայատառ—տաճկա-  
 բարբառ օրագիրներ եւ լրագիրներ ալ հրատա-  
 րակուեցան , որոնց պատճառած մնասը Պօլսոյ  
 Հայոց արդի վիճակին կացութեանը լաւ տեղ-  
 եակ եղողները ակնթարթ մը չ'ըրած կրնան  
 հասկնալ , որ թէեւ հայատառ—տաճկաբար-  
 բառ գրուածներ Հայերէն չըգիտցողներու նը-  
 պաստեր են , բայց քիչ շատ Հայերէն գիտցող-  
 ներու ալ գիտցածնին ձգելով այն կողմը դիմե-  
 լու ճամբայ մը առջեւնին բացեր են , կամ լաւ  
 եւս ըսեմ , օտարամուլաց այս կերպով խրա-  
 խոյս մը տրուեր է : Մեր կարծիքն ալ այս  
 է , որ Հայք իրենց օգտին համար պէտք է  
 Տաճկերէն գրել կարդալ դիտնան եւ ոչ թէ  
 Հայերէն տառերով Տաճկերէն գրելու եւ կար-  
 դալու ետեւէ ըլլան , որ բնականաբար քանի եր-  
 թայ այն կողմը յարին օտարամուլք : Պօլսոյ մէջ  
 հրատարակուած օրագիրները եւ լրագիրներն  
 ու պարբերական թերթերն ալ , որ ժողովուրդը  
 աւսման եւ կրթութեան պիտի յորդորէին եւ  
 աշխարհաբառ լեզուոյն ալ գործական ըլլալուն



որ փոքր 'ի շատե կտ ընդ ետ պիտի նպաստէին  
 անոնք ալ մէկ մը վերոյնիշեալ հայտտաւ.— աւաճ  
 կարարբառ հրատարակուելուն նա հայերէնի ար  
 դելքները տուին . եւ մէկ մ' ալ հայերէն լեզու  
 աւ եւ Տաճկարարբառ հրատարակուածներէն  
 ոմանք եւ Պօլսէն դուրս հրատարակուածերն ալ  
 անոնց ստեալ ձայնակցելով՝ աւելի ջանացին Ազ  
 դին մէջ պատահած վիպաց եւ դիպուածոց առ  
 թիւ կռուասիրաց եւ խռովայոյզ անձանց մտու  
 թիւնը դրդուել, եւ ջանալ որ ո'ւր երկու հայ կը  
 ուիւ ընեն, բռնել երկուքին գլուխը իրարու զար  
 նել եւ աքաղաղի պէս իրարու աչք կացեց  
 նել, եւ հրատարակութիւննին իրենց կրից նե  
 տերը ընելով՝ արձկել կամքերնին ուղածին  
 սիրար մխելու . ու ժողովրդեան մէջ՝ աղմկի եւ  
 շրթութեան հրդեհ մը բորբոքած ատեն, փո  
 խանակ զայն հոմագիչ եւ խաղաղար կերպերով  
 մարել ջանալու՝ ընդհակառակն յուզմանց բո  
 ցերը սաստկացրնելու համար հովահարներով  
 վազել, որով կարծեաց եւ դադարիարաց միա  
 ցրնելու փոխարէն եւս առաւել հակառակելով  
 թր ըստ օրէ ժողովրդեան աչքին շնչին բաներ  
 երեւնալով վարկենին կորուսին : Եւ ի՞նչպէս  
 վարկենին չլիտրանցրնեն, քանի որ վարկալա  
 ըաղի աղճատանքէ եւ բարբաջմունքէ ու բա  
 նակառէ ուրիշ նիւթ չ'ունին եւ որ չ'են ուզեր  
 փնտուել : Այլէ'կ նիւ թի ընտրութիւնն, որ աչ



Խարհիս օդն ըլլալուն բնաւ հասնելիք եւ վերջանալ չ'ունի : Այս թերթերէն ոմանք ալ բընաւ չըդագրեցան՝ Ազգին մէջէն փոքր թերութիւն մ'ընտղն անգամ չարաչար ծաղրելէ եւ պախարակելէ . եւ իրենց կարծիքն այն է եղեր որ այնպէս չարաչար ծաղրելով եւ պախարակելով Ազգը կըկրթուի : Կըզարմանանք որ այսպիսիք չ'են առաջարկեր Ազգին , թէ աղաք ազէկ կրթութիւն առնելու համար՝ պէտք է դըրարոցաց եւ վարժարանաց մէջալ , ուսուցչած հեամէկ մէկ հատ ալ ծաղրածու եւ խեղկատակ ( Տոգալլէր ) ու ձեռնածու ( օգտաւալ ) դնել : Ոմանք ալ Հայոց անցեալ եւ ներկայ վիճակին ու դգացմանը բողբոլին անտեղեակ ըլլալով՝ աս չափ Գաղղիերէն գիտնալէն ետեւ « Մեռեալ բարեկամ , որաւ կիւն իշիճ վար արձէն սոսաւ ուսմարըճ ի շիւն Էտէրիճ : » ըսելով , կ'ենեն Ազգին դգացմանց թարգման եւ իրեն ալ օգնական ու պահապան կոչելով ինքզինքնին այնպիսի թերթեր կըհրատարակեն : Եւ « Մարդ նախ գլխէն կը կրթուի : » ըսելով՝ կ'ենեն սրնքնոց ( « Եղլի » ) հագնող Հայոց գլուխն անգամ Եւրոպացւոց գլխարկ ( շաքիտ ) դնելու . այսինքն՝ Հայոց դգացմանը անյարմար գրուածքներ : Բայց ըսենք թէ մէկն ընդունեցաւ զայն գլուխը դնել , որ որ ոսկւով եւ գոհարով ալ ընդելուզեալ ըլլայ չ'ընդունիր . անկէց ալ խկոյն Եւրոպական խելք



եւ Նւրապական ուսում ու կրթութիւն կրինա-  
 ունն : Քանի մը կեցցէ՛ որ լսեն , խելքերնին կը  
 թողնեն եւ չորս կեցցե՛՞ ( քանի որ գործերը  
 հասցէ՛ են ) հինգ միլիոն Հայոց ազգը երջան-  
 կացաւ ըսելով Սրեւելքէն մինչեւ Սրբւմուտքի  
 վերջին եզրը եւ Հարաւէն մինչեւ Հիւսսոյ վեր-  
 ջին ծայրը աւետիս եւ քարոզ կարգալու կ'ել-  
 լեն . մանաւանդ եթէ Սրեւելեան Թատրոնին

„Յնձ ապեն „

„Մը լսենն „

„Թէ որ Հոյ „

„Ձիք անդ վայ : „

երգը լսեն . այն ատենը՝ այլ կըլաւերանայ եւ  
 գրաւ կըղնեն ինքզինքնին , որ աշխարհ Հայոց  
 համար գրախա եւ արքայութիւն եղաւ : Ստեք  
 հրատարակուած օրերնուն՝ պաշտօններնուն  
 փափկութիւնն ալ կըխտատովանին . բայց բե-  
 րաններնին անդուռն ըլլալով եւ իրենք ալ միշտ  
 կուտի մէջ գանուելնուն , գլխախներնին ծակ ծակ  
 եղած է . որ ներքին հովերէն դատ՝ յարտաքին  
 հով մի ալ փշերուն պէս , մտքերնուն մէջ մտնե-  
 լով խտատովանութիւննին ալ եւ խտատմունքնին  
 ալ՝ զերթ ծուխ հոլմալար կ'առնէ կրտանի եւ  
 յողս կըցնդի : Մնած օրերնուն՝ անուններնին  
 ալ իրենք կը դնեն , ո՛մանք երկնից երեսը փայ-  
 լող փայլատակող , ո՛մանք երկրիս յատակէն  
 երկնից խոր բարձրութեան մէջ սեպացեալ բարձ-



բութիւնք , ո՛մանք երկնից քիթը անուշահոտ  
 բութութիւնք հասցնող ծաղկանց թագաւորներ .  
 ո՛մանք երկնից մէջ հրեշտակաց հետը թռչելու  
 մրցող թռչուններ . . . : — Արեւմտ աստնց մէջ կենս-  
 դանիներ ալ կան : — Այո՛ կենդանիներ ալ կան .  
 բայց թռչող ու թեւաւոր կենդանիներ են , թէ-  
 պէտեւ ամենուն անունն ալ՝ միշտ երկինքէն  
 վեր կ'ելնէ եւ բնաւ վար չ'իջնիր , սակայն այ-  
 սու ամենայնիւ իրենք միշտ մարդոց ոտիցընէր-  
 քեն են : Ասոնք Հայոց մէջ եղած յամառ եւ  
 մնասակար կողմնակցութեանց վրայ նոր տեսակ  
 մի ալ կուտեցին . իրենց քանի մը ընթերցողնե-  
 ըր ո՛րը այսինչ օրագիրեան եղաւ , ո՛րը այնինչ  
 լրագիրեան , ո՛րը այնինչ Տրագիրեան , ո՛րը այն-  
 ինչ Տո՛Տո՛ագիրեան . ո՛րը այսինչ Կո՛կո՛ագիրեան ,  
 ո՛րը այսինչ Գր՛գր՛ագիրեան , ո՛րը այնինչ Խո՛խո՛ա-  
 գիրեան , վերջապէս ասոնք զիրենք պաշտողնե-  
 թուն այնպիսի գոռում գոչումներ մանչեցնել  
 տուին եւ կուտան որ երբէք ախորժալուր ներ-  
 դաշնակութիւն մը չ'ունեցան եւ թերեւս ալ չը  
 պիտի ունենան : Եւ հիմայ յիշեալ թերթերէն  
 շատերը քանի ճշտեղ ալ դեռ մեծ համարում եւ  
 յարգ ունին , այսինքն պանրավաճառաց եւ  
 խիւսավաճառաց (հեշտաճի) քովը՝ սրոնք ձրի  
 կ'ընդունին ուրիշներէն եւ անոնց մէջը պանիր  
 ու խիւս դնելով կրովաճառեն , բայց այն թեր-  
 թերը հոն ալ կրմնասեն մարդոց , ո՛վ որ անոնց



մէջը դրուած պանիրն ու խիւան որ ուտէ, ան  
 պատճառ սիրտը խառնուելով պիտի փսխէ :  
 Հայտատա—տաճկաբարբառ հրատարկուած օ-  
 րագիրներէն մէկը անգամ մը ամենայն իրաւամբ  
 գրեց թէ, «Միշտ կը դանդաւորեալ թէ ժողովուրդը  
 ընթերցասէր չ'է եւ մեր գրական երկասիրութիւն-  
 ները չ'են վաճառուիր : Եւ թէ Եւրոպիոյ ժողո-  
 վրրդոց յառաջագիտութիւնը՝ իրենց ընթերցա-  
 սիրութեան արդիւնքն է, որ մեր ժողովուրդէն  
 կը պակասի : Եւրոպիոյ հեղինակաց գրուածքնե-  
 րը կը վաճառուին, որ անոնք ալ կը խրատուան  
 միշտ աշխատելու : Բայց չ'ենք գիտեր թէ՛ մեր  
 գրուածքներն ալ որ Եւրոպացւոց լեզուաց  
 թարգմանուի, արդեօք վրայնին նայող անգամ՝  
 կը գտնուի : » Մեք ալ այս ճշմարտութեան վրայ  
 սա աւելցրնենք ըսելով թէ երանի՛ Հայոց սոզ-  
 գին որ Եւրոպացիք Հայոց մէջ այսչափ թերթեր  
 հրատարակուիլը կը լսեն եւ անոնց մէջ ինչէր հը-  
 րատարակուիլը չ'են գիտեր, վասնզի եթէ գիտ-  
 նային, Հայք անոնց առջեւը առանց Արաբացի  
 ըլլալու երեսի սեւութիւն պիտի ունենային :  
 Ո՛վ Պարոն Քիւրքճեան—օ՛Ֆ, ի՞նչպէս այդպի-  
 սի հողմավար տերեւներու պէս թերթեր թա-  
 փող անպտուղ բարտիները գրական ասպարէ-  
 ղին հսկայները կ'անուանես, եւ կը մեղադրես  
 որ հայրենասիրակ Հայոց դպրոցներէն ելած մէ-



կը չըկայ ասանց քովը : Սա քանի մը էջ սեւ-  
 ցած թուղթերը կրնան քեզի հասկցընել որ հայ-  
 բնաբանի Հայերը ուսումնասանեաց չեն . որ ե-  
 թէ դպրաց տեսած ենք ըսելու ըլլայինք , ար-  
 քայութիւնը տեսած ենք ըսած պիտի ըլլայինք :  
 Ես այց ո՞ր մասին Հայք Պօլսոյ մէջ իրենց մեծ ա-  
 մեծ օգտիցը դէմ միշտ շարաշար չըհակառա-  
 կեցան . Պօլսոյ ճաղճամանի Հայոց մէջէն ինք-  
 ղինքնին ճանանչուաւ իսա մաքրի տէր համարող-  
 ներն անդամ տակաւին չըկրցան տեսնել Աղ-  
 դին տոջեր ճահողակի ընթանալու համար բաց-  
 աւած շաղպայիբայ վառուելիք կանթերները , եւ  
 եթէ տեսան ալ մէջը կաթիլ մը խղ չըլեցուցին որ  
 պարայգն ալ վառի եւ բողբոլին շիջանի : Աղդին  
 մէջէն օրագրապետութեան պաշտօնին արժանի  
 Պ . Խաչատուր Մխակեանը անցեալ տարի Փա-  
 րիզ քաղաքէն Օսդկոյսաձոր անուն օրագիր մը  
 հրատարակել յանձն առաւ , եւ Փարիզ անուն  
 Լրագրոյն մէջ յօդուածով մը ծանայց , որ եթէ  
 հրատարակուելիք օրագրոյն ծախքը ելնելու չափ  
 բաժանորդներ գրուին , անմիջապէս հրատա-  
 րակէ . բայց ի՞նչ եղաւ . . . : Եւ նոյնպէս երեք  
 տարի առաջ Յոյս անուն պատկերապարզ օրա-  
 գիր մը Պօլիսէն հրատարակելու համար Պ . Մը-  
 կրաիչ Պէշիկտաշեան եւ Պ . Սրապիոն Հէքիմէ



եանը եւ Պ. կարապետ Գարազ աշեանը՝ յայտա-  
 բարութիւնով մը ծանուցին . բայց ի՞նչ եղաւ . . .  
 — Ի՞նչ պիտի ըլլայ, ամենն ալ անկարելի բա-  
 ուին հարցուր այն քեզի քանի մը մեկ-  
 նութիւն կուտայ : Օրագիրներ եւ լրագիրներ  
 որ ուրիշ ազգաց միշտ օգտակար են, Հայոց  
 համար մնասակար կը դանուին, վասն զի անոնց  
 շատերը այնպիսեաց ձեռքն է, որոնք իրենց շա-  
 հուն համար Ազգը եւ Ազգին գործերը իրենց  
 բերանը խաղալիկ ըրած են . եւ իրենց ուղեղին  
 ծնունդը խնդրէն ուրիշ բան չ'է զոր ուզածնուն  
 վրայ կը քսեն եւ երբեմն ալ կը դառնան կըլզեն :  
 Չորս հարիւր տարիէն ՚ի վեր կարծես թէ մէկ  
 անգամ մը սատանայները Պօլսոյ մէջ Հայոց  
 գլուխները բռնելով կատաղութեամբ փարտելէ  
 թող տուին, որ Հայոց ուղեղները հանդարտե-  
 ցան եւ միանալով որոշեցին որ Ազգին օգուտը  
 խորհին եւ Ազգը բարեկարգ վիճակի մը մէջ դը-  
 նեն : Խորհեցան եւ իրենց խորհուրդները յլա-  
 նալով Ազգին Սահմանադրութիւն մը ծնեցաւ,  
 որուն ժողովուրդը կնքահայր եղաւ եւ եկեղե-  
 ցականն ալ մկրտեց զայն ու կնքեց, որնոր մե-  
 ուած Հայաստանին որդին ըլլալով մեծցաւ եւ  
 հօրը ժառանգութեանը տէր ըլլալ ջանաց, որ  
 իւր եղբարցը եւ քերցը հետ վայելեն . քանզի  
 յօրայներնին ( եօչէ պատա ) յափշտակեր էր եւ  
 միշտ վատներու վրայ էր : Մկրտող եւ կնքող ե-



կեղեցականին բանին չըզալով այս իրաւունքի  
 ժառանգութիւն պահանջելը, ուրացաւ, թէ  
 «Այդ Հայաստանին որդին չ'է, եւ ես ալ ոչ  
 մկրտեցի եւ ոչ ալ կնքեցի. անհարազատ ծը-  
 նանդ է եւ աղջկորդի (ԷԵՃ) : Եւ եթէ չ'էք հա-  
 ւատար թաղատեսուչներուն (Տահաւլէ Տարաբը)  
 եւ թաղին հարդապողին հարցուցէք : » Ինքնակոչ  
 թաղատեսչաց բանին կուգար ոտքերնին'ի գե-  
 տին տրուիելով վկայութիւն տալը . եւ թաղին  
 հարդապողն ալ՝ եկեղեցականին խօսքէն աւելի մօ-  
 ղութիւն հաւատալով կիսկատար «Այո» մ'ար-  
 տարերեց, որով վճռուեցաւ եւ իբրեւ անիրաւ  
 բանտարկուեցաւ, եւ իրեն հակառակորդներն  
 ալ իրեն դատաւոր կարգուեցան : Ժամանակ  
 մը ովսաննայով Նրուսադէմ տարածնին, դարձ-  
 եալ Նրուսադէմի մէջ չարչարելով խաչը բուե-  
 ուեցին եւ գերեզման իջուցին . . . Պիղատոսը  
 տես թէ ինչ պատասխան կուտայ : «Միթէ եւ  
 ես Հրեայ իցեմ. ազգն քո, եւ քահանայապետք  
 մատնեցին դքեղ ինձ : » Յ՝Է . Գ՝Լ . ԺԸ . 35 :  
 Մեք Սահմանադրութեան ընդդիմութիւն ընող-  
 ներըն այն ատենը իրաւունք կրնայինք տալ, ե-  
 թէ իրենք Աղգին համար Սահմանադրութենէն  
 եւս առաւել գերազանց կանոնադրութիւն մը  
 յօրինէին եւ ըսէին թէ, «Այդ չ'է կատարեալ,  
 ահաւասիկ կատարեալը, պէտք է որ այս ընդու-  
 նինք : » Քանի որ չ'ըրին, ըսելէ թէ օրէնք եւ



կարդ չեն ուզեր ունենալ . բայց այս դարուս  
 մէջ օրէնք եւ կարդ ունենալ չ'ուզողներն ալ  
 թող դերեզմանին պատանքը հազանին եւ այն  
 պէս շրջին աշխարհիս երեսը : Մեք կ'ուզենք որ  
 ո՛չ իրենք հազանին այն պատանքը եւ ո՛չ ալ  
 Աղգին հազցընեն : Մտածէ Պարո՞ն Աղամ  
 այս վերջին անգամն ըլլալով՝ որ հրեշտա-  
 կի շապիկ հագած օձերու խաբուելով դը-  
 րախտէն վռնատեցար , եւ փուշ ու սա-  
 տասկ բոկ ոտքովդ կոխելու դատապարտ-  
 ուեցար . եւ գիտես որ նախանձը կրնայ Աստ-  
 ուածահաճոյ դո՛հ ընող Աբէլ որդիս իւր Ապէն  
 եղբորը ձեռքովը մեռցընել տալ , եւ ինքն ալ  
 վայրի գազան մը դառնալով՝ Ղամէքի մը ձեռ-  
 քով մեռնելու կրնայ դատապարտուիլ : Աստի  
 պատուիրէ ատանց , որ հաւատքնուն քովէն դու-  
 դահաւտար եւ դուզընթաց օրէքն մ' ունենան ,  
 վասն զի ատոնց բերնովը « Գժոխք կայ . մէջը  
 կ'այրիս » ըսելնուն անիրաւը եւ անզգամը ա-  
 կանջ չըկախեր . ( եթէ իրենք ալանջ կըկա-  
 խեն ) քանի որ Ղաւիթն ալ կ'ըսէ , թէ  
 « Ասաց անզգամն 'ի սրտի իւրում , թէ ո՛չ  
 դոյ Աստուած : » Աստուած չըկայ ըսող անզգա-  
 մը , դժոխք կայ կ'ըսէ՞ . եւ Աստուծմէ չըվախ-  
 ցողը դժոխքէն կըվախնայ . բայց օրինաց իշխա-  
 նութենէն կըվախնայ , վասն զի օրինաց իշխա-  
 նութիւնը անզգամաց տալիք պատժի դժոխքը



հաւատքին պէս մեռնելէն վերջը չըտար : Աւստի հաւատքին քովէն անոր զուգահաւատար եւ զուգընթաց օրէնք մ' եղած ատենը՝ հաւատոյ անկեղծ հնազանդը իւր մեռնելէն վերջը հաւատքին իրեն տալիք դժոխքէն վախնալով չարիք չըգործեր , եւ հաւատոյ կեղծաւորաբար հնազանդողն ալ՝ օրինաց աշխարհիս մէջ տալիք պատժի դժոխքէն վախնալով՝ չարիք չըգործեր , որով խաղաղութեան եւ անդորրութեան ալ սով չըլլար : Մեք Սահմանադրութեան հակառակողներուն դիտաւոր մասը անոնք կըգրանենք որ հաւատքին կեղծաւոր հնազանդեան , եւ չեն ուզեր որ քովերինն գործած չարիքնին տեսնելու եւ պատժելու համար արժուն կեցող օրէնք մ' ըլլայ : Ապացոյց կ' ուզես իրենց հաւատոյ կեղծաւորաբար հնազանդ եւ անզգամ ըլլալուն : Ասէ՛ ուրեմն : Մնոնք իրենց չար կամացն համար եւ անուննին սուրբ եկեղեցւոյ ու պատարագին մէջ բռնի յիշեցընելու եւ յիշելու համար՝ Հայուն սրտին սուրբ եւ բերնին համբուրելի տեղը՝ Հայը Հայուն դէմ կռիւ ընել տուին , եւ Հայը Հայուն աչքին մտխիւր ցանկ տուին , ուր որ Հայը հոն՝ ինքզինքն Աստուծոյ առջեւը գլտէ . եւ տէրը ծառային վրայ ունեցած իշխանութիւնը գործածելը , որ յանցանք կըհամարի եւ եղբոր պէս կըվարուի հետը . եւ թշնամին անգամ , որ հոն թշնամ



ւոյն հետ հաշտուելու կ'երթայ : Մեր սամիկ  
 ժողովուրդը յանցաւոր չ'եմք կրնար դանել իւր  
 բրածինն ։ վասն զի այնպիսիք բնականաբար կրօ-  
 նականին ամխադոյն սուտն անդամ ձեան պէս  
 ճշմարտութիւն ընդունելու մտաց աչքի կուրու-  
 թիւնն ունին ։ եւ սամիկ ժողովուրդին աչքին  
 ալ կարուստները գերբնական բաներ են : Այն  
 այն Աղգին եւ ժողովրդեան որ իրեն մէջ հա-  
 րուսաները վատ են . վասն զի սամիկ ժողո-  
 վուրդը , ընդհանրապէս Սրեւելցիք , միշտ կը  
 ջանան հարստաց նմանիլ եւ անոնց հետեւիլ :  
 Բայց կրտսալի՞նք արդեօք որ լսենք , թէ  
 ժողովրդեան աչքէն աւելի կրօնականաց աչքե-  
 րը կըբլշանան հարստաց փառացն ու սակւոյն շո-  
 դունին : Միթէ այն ատենը եւս աւաւել չարի-  
 քը չ'ե՞ն զայրանար , երբ որ կրօնականներն ու  
 հարուստները ձեռք ձեռքի տան , ինչպէս որ  
 միշտ եղաւ Պօլսոյ մէջ Հայոց :

Այսպիսի կրօնականաց եւ հարստաց ձեռ-  
 փով կըդիւղուի ժողովուրդը իւր կապանքները  
 եւ շղթայները արձակողին դէմ անդամ պա-  
 տերազմելու եւ արիւնը թափելու . ինչպէս որ  
 այժմ Ամերիկայի մէջ կ'ըլլայ : Ամերիկայի մէջ  
 մարդիկ իբրեւ անբան անասնոյ պէս չլվաճա-  
 ուելու համար՝ այժմ Ամերիկացիք միմեանց դէմ  
 կըպատերազմին . մէկ կողմը կ'ուզէ որ գերու-  
 թիւնը Ամերիկայէն վերնայ , եւ միւս կողմն ալ



կ'ուղէ որ չըմբերնայ : Գերութիւնը վերնալ չ'ուղողները հարուստ են եւ իրենց զօրաց մեծ մասնալ դերիներն են՝ որ իրենց ազատարարացը դէմ կըսպասերազմին , ո՛հ , այսինչ սարսափելի ազդեցութիւն է որ ո՛ւր հարստութիւն ըլլայ կը գտնուի եղեր եւ ոչ թէ միայն Հայոց մէջ : Այս վհուկները թովչի բերանով Հայաստանցիներն ալ դիւղել ջանացին , բայց օգուտ չըրաւ , վասն զի օր մը տեսանք որ Աանեցի Հայ մը իւր դիմացը կեցող ընկերին կ'ըսէր , « Աարդան ախպեր՝ , էդ լուսաւորեալ լաճերու անհաւատ կ'ասեն , աճա չ'է՛ ախպեր , սիւտ են էդ կըսակ բերնից թափողներ . էդ լաճեր մէջ խնտալուց թայաստան կ'ասեն , մէջ լալուց թայաստան կ'ասեն , դո՛ր ասեմ ախպեր , էդ լաճեր խաների , ըսէալաների , կաճտանց , բմէ՛ թայաստանցու դրել կարդալ կու սորվեցընեն . էճա՞ կ'ասես ախպեր , դրել կարդալ չ'է՞ որ ը՛մէն բանէ լաւ է : » Այս կարծիքը ունեցող Հայաստանցիք , կամաց կամաց սկսան Պօլսոյ Հայոց Փոլսոյի հարանին եւ ամերայապետաց դէմ Սաղմոսէն « Խղեսցուք զկապանանոցա եւ ընկեսցուք 'ի մէնջ զլուծնոցա : » տունը գոց ընել . եւ ի՞նչպէս չ'ընեն , երբոր մտածեն անգամ մը , թէ Պօլսոյ Փոլսոյի հարանն ու ամերայապետութիւնն է որ իրենց եղբարց մէկ մասը Հընոսիմէադատան ընելով բաժնած է իրենցմէ . մէկ մասը նոյնպէս Բողոքական ըլլալուն անհող



մնացած է : Եւ հիմայ ալ դարձեալ նոյն Փոխ-  
քիչարանն ու ամբարշատեամբի -նն է որ Հայերը Լու-  
սաւորեալի , Խաւարեալի , մոլորեալի եւ չէզոքի  
ու անհոգի կրբաժնէ , կամ Պոլիսը Հայոց կո-  
րրստեան դուռ կ'ընէ , քանի որ կրնար կենաց  
դուռ բլլալ եւ Հայոց առջեւը բացուիլ :

Լսէ Պարոն Ադամ եւ տես թէ Պոլիսը ի՞նչ  
պէս Հայոց համար դուռ կորստեան եղեր է , որ  
դուռ կենաց բացեալ էր : Տաճկի տէրութիւնը  
քարերար գանուեցաւ , որ Պոլսոյ տիրած ատենը  
Հայաստան խուժադուժ ասպատակաց ոտից  
կոխան եղած ժամանակը զայն խնամեց , եւ  
Պոլսոյ մէջ Հայաստանի ժողովրդեան համար  
Աղգային վարչութեան եւ վաճառականութեան  
ու զանազան արուեստից արտօնութիւններ տու-  
աւ , որով Հայաստանի հարուստները , վաճա-  
ռականները եւ արուեստաւորներն ու բազմա-  
թիւ Հայ ժողովուրդ Արեւելքի եւ Եւրոպիոյ  
մէջտեղը վաճառաշահ մայրաքաղաք ժը իրենց  
ապաստանարան եւ շահու ագտրակ ունեցան :  
Հայոց հաւատարմութիւնը Տաճկի տէրութեան  
ու շաղրութիւնը իրենց վրայ գրաւելու արժանի  
ըբաւդիրենք , որով Տաճկի տէրութեան հրամա-  
յած երկիրներուն եւ մայրաքաղաքին մէջ շատ  
տեսակ շահաւէս դործեր ձեռք բերելուն զատ ,  
նաեւ Տաճկի տէրութեան դործոց ծառայու-  
թեանցը մէջ անգամ ընդունուեցան : Եթէ ա-



սոնք Ազգային Վարչութիւնը յառաջատարացեալ  
 կերպիւ շարաշար շրջործածէին, եւ զիր-  
 եար Ազգին հետ պատէ 'ի պատ եւ քարէ 'ի  
 քար չրդարնելով եւ զիրեար լարիւրինթու-  
 ներու մէջ ու կոկորդիլոսներու բերանը չընե-  
 տելով մնային, Ազգը միշտ Պօլսոյ մէջ զօ-  
 րաւոր բազմութիւն մը պիտի ունենար: Եւ ե-  
 թէ Յունաց պէս ալ Եւրոպիոյ ուսումն ու կրթ-  
 թութիւնն ալ ձեռք բերելու ջանային, այն ա-  
 տենը՝ Պօլիար Հայոց համար պիտի ըլլար անսպա-  
 ուելի բարեաց աղբիւր մը եւ դուռ կենաց մը .  
 վասն զի անկարելի չ'էր որ աշխարհակա-  
 նաց եւ կրօնականաց համար զատ զատ քա-  
 նի մը բարեկարգ դպրոցներ բացուեր. եւ  
 եթէ անոնց մէջ ուսանողներն ալ ըստ մե-  
 ծի մասին հայրենաբնակ մանկաիք ըլլային, ներ-  
 կայիս մէջ միայն Աւրազայ վանուց մէջ հայ-  
 բենախօս եւ հայրենասէր Խրիսեան Սկրտիչ  
 վարդապետ մը չ'էր ըլլար, այլ ամեն մէկ վանք  
 եւ ամեն մէկ քաղաք ու գիւղ մէկ մէկ հայրե-  
 նախօս եւ հայրենասէր վարդապետներ ու վար-  
 դապահապան աշխարհական ուսուցիչներ կ'ու-  
 նենար: Եւ Աւենեակոյ ու Վիէնայի վանքե-  
 րուն մէջ վանականաց բանակ մը փոխանակ  
 Հիոսմէադաւանութեան դերի ըլլալով զայն  
 ծաղկեցրնելու ճգնելու, կրնար Հայաստանի  
 մէջ Առսաւորչականութեան ստալ իրեն



այն ճիգը , որով ոչ կրօնական բաժանում  
ներ կ'ըլլար եւ ոչ ալ Ազգային : Եւ Բողոքա-  
կան միախօնարաց ալ չ'էր ըսուեր թէ «Մեր  
պատկերքներն ու ձեռքերնուս բրերը բերան-  
ներնիդ պապանձեցրնէ :» , այլ «Ուսում  
նիս ու կրթութիւննիս բերաններնիդ կարկէ :»  
Եթէ Յունաց անցեալին մէջ կրածներնին եւ  
ներկային մէջ ունեցածնին միտք բերուի , կը  
պարտաւորին Հայք աշխարհի առջեւ ամօթա-  
պարտ դատուելնին չ'երեւնալու համար , ոչ թէ  
ձեռքով երեսնին ծածկել , այլ գերեզմանին հո-  
ղովը : Պօլսոյ Հայոց մէջէն ողջամիտ մաս մը  
փորձ մ'ընել ուղեց այս ամօթապարտութեան  
նախատինքը Ազգին եւ իրենց վրայէն բառնա-  
լու , բայց տես թէ ի՞նչ ըրաւ Պօլսոյ Փոփոքիկա-  
բանն ու ամբարշատեանն : Լեցուցին ժողովուրդը  
Պօլսոյ ծովուն մէջ . Փոփոքիկաբանը խորշակ եւ Հարաւ  
կրփչէ , զանոնք վոսփորի կողմէն դէպ 'ի Սիպե-  
րիոյ տառնամանեաց ներքեւ տանելու , ամբարշա-  
տեաները Հիւսիս կրփչեն , զանոնք այրեցած դոտ-  
ւոյն ներքեւը տանելու . խուճք մի ալ Ս. Բեւ-  
մուտք կրփչեն «Ետըտ հանէի կողմէն , զանոնք  
Խրիստանուպօլսոյ (Ռ-սէի-տաբ) եղերքը հանե-  
լով դէպ 'ի Հայաստան ուղեւորելու . . . ոչ թէ  
Պօլսոյ ծովուն այեաց մէջ լցուած ըլլայ ժողո-  
վուրդն ու Հայոց բաղդը , այլ եթէ Նոյ նահա-  
պետի նաւուն մէջ ալ որ ըլլան , քանի որ այս հաւ-



կառաւկ հովերը կը փչեն աղատում չըկայ : Եւ  
 եթէ ըսենք , թէ կալ (հարճան) մի է Պօլսոյ մէջ  
 Հայոց բազդը , քանի որ այս հակառակ հովերը  
 կը փչեն , ոչ հոսողները պիտի կարենան յար-  
 գին մէջէն ձորերը շեղլ ընել եւ ոչ ալ Ազգին  
 շտեմարանը լեցնել :

ՀԱՅՈՑ ՊՕԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՒՆԸ ԿՍՄ  
 ՀԱՅՈՑ ԿՂԵՐ : Եւր մի շատ անգամ պատուիրե-  
 լով կը կրկնէր թէ , « Աշխարհիս ամենէն մեծ  
 արուեստաւորները (Էսնաֆ) կրօնականներն են  
 եւ անոնց հետ չ'ընկնուիր : » Բայց մեք անոնց  
 հետը չ'ընկած իրենց գործոց եւ գնացած ճամ-  
 բայներնուն վրայ թողած հետքերնուն վրայ ալ  
 արդեօք չ'ենք կրնար նայիլ : Տաճկաց առակը  
 կ'ըսէ թէ , « Նայող աչքին արդելք չ'ըլլար : »  
 Բայց ես նայելէս ետեւ կ'երթամ տեսածս ու-  
 ըիշի ալ կ'ըսեմ . եւ այս աղատութեանս ար-  
 գելք մը չ'ըլլալէն ետեւ , թէ որ ուզեմ առանց  
 ես խօսելու , գրչիս բերնովը խօսելիքս կ'ընկա-  
 ըսող բեմ թող անոնք ալ նային , որովհետեւ ա-  
 նոնք ալ ինձի պէս աղատ են նայելու : Եւ թէ  
 որ կռուիլ ուզեն , թող գրչին հետը կռուին .  
 սակայն գրիչն ալ կ'ըսէ թէ ամենեւին անոնցմէ  
 չ'եմ վտիսնար , վասն զի անոնց ձեռքը գրիչ  
 չ'ըկայ , անոնք փետուրը գրչի համար չ'են գոր-  
 ծածեր , այլ հովահար կը շինեն որ , ամառուան  
 տաքուն փարտելով գոլութիւնս ու հանդատու .



թիւն առնեն , եւ ձևեռն ալ ճգնելու համար  
 նստած սենեակնին տաքննալու համար դրուած  
 կրակը հրահրեցնելու կը դորձած են . որ ըսել է  
 թէ տարին տասներկու ամիս քովերնին երթալէ  
 չը վախնար : Բայց ես ուրիշ բան մ' ալ մտածե-  
 լով քաջալերուեցայ աւելի անոնցմէ աչքիս տե-  
 սածը եւ մտքիս խորհածը գրչիս բերանը տալ ,  
 որ երթայ ազատաբար ցուցնէ : Եւ թէ որ ու-  
 ղեմ ես ալ կ'երթամ իրենց հետը խօսելու .  
 վասն զի անոնք զէնք մ' ունին եղեր որուն ա-  
 նունը անէծս է եղեր , որ անիծի պէս մարդոց  
 գլուխն 'ի վար կը թափեն եղեր . սակայն այդ  
 ալ փայծս չ'է , վասն զի հանիս (սինե) անգամ  
 այդպիսի անիծսերը կը սանտրէր , կը թափէր : Փոր-  
 ձենք անգամ մը եւ իրենց մէկ մեծ պակասու-  
 թիւնը ետեւնուն կանչենք , տեսնենք թէ վրայ-  
 նին կ' առնե՞ն թէ կը դառնան պակասութիւննին  
 առաքինութիւն կը ցուցնեն եւ թափելիք անիծի  
 պէս անէծքնին ալ երկնից կայծակներ : Անչենք :  
 Առաքինութեան ճամբուն մէջ կաղ կղեր . . . —  
 Ի՞նչ . . . անի՛ծ անի՛ծ անի՛ծից արմատ . . . մենք  
 ոտքի անգամ կարօտ չ'ենք . երկնքէն թռչե-  
 լու համար հրեշտակային թեւեր ալ ունինք . . . :  
 Թռչելիք , վերնայիք , կամ վա՛ր ինկնայիք որ  
 Հայոց ազգն ալ ձեռքերնուդ ազատեր . դուք  
 հրեշտակի թեւեր ունէիք , բայց « Վիսա ծանր  
 է » ըսելով տարիք անոնց հետ փոխեցիք որոնք



որ հրեշտակաց հետ ստեղծուեցան : Եւ երտ-  
նի թէ Հայոց ազգն ալ, տանէիք արեգական  
պէս կարծրուկ ոսկւոյ եւ լուսնոյ պէս ձերմակ  
արծաթի հետ փոխէիք ( թղթադրամի հետ չը  
փոխէք վնաս կ'ընէք) եւ քսակնիդ լեցընելու կա-  
րող ըլլայիք : Տեսէք հիմայ ի՞նչպէս ժպտեցաք  
եւ «Օրհնեալ ըլլաւ . Ստուած ձայնդ լսէ : » ը-  
սիք : Բայց թէ որ այդպէս չ'ըլլայ, կ'աղաչեմ  
դարձեալ չ'անիծէք, վասն զի Հայոց ազգն ալ  
կ'ըսէ թէ «Մեք ո՛չ Արարացի գերիներ եմք եւ  
ո՛չ ալ ասոնց չորս թել մօրուքը մեր վղին շղթայ-  
ներ են : » — Եգերացի գերի թող ըլլան ի՞նչ  
կայ եղեր : Եւ ասոնք ստացուածքի պէս մեր  
գերիներն են, ապա թէ ո՛չ, ի՞նչու համար ի-  
րենց բերանովը մեզի «Տէր» կ'ըսեն . Հայոց  
հայրապետները ասոնք իրենց արեամբը գը-  
նեցին եւ մեզի ժառանգութիւն թողին, վասն  
զի մենք Հայոց հայրապետաց որդիքը եւ յա-  
ջորդներն ու փոխանորդներն ենք : » Տէր բառին  
խնդիրը մէկդի թողունք . . . միայն սա ըսելով  
թէ օգոստոսիառ կայսերք անգամ յոյժ ստու-  
րին վիճակի մէջ եղող անձի մը «Տէր» կ'ը-  
սեն, ուրեմն ըստ ձեր կարծեաց՝ անոնք ալ ու-  
րու որ «Տէր իմ» ըսեն անոնց գերին ըլլալ հարկ  
կ'ըլլայ . բայց դուք Հայոց հայրապետաց որ-  
դիքը եւ յաջորդներն ու փոխանորդներն ըլլա-  
լուն մասին գալով ամեն խորհոյ ճակատները կ'ը-



կնճախն եւ Հայք ալ իրաւունք կ'ունենան ըսե-  
լու թէ « Եթէ դուք գործով ապացուցանէք որ  
Հայոց հայրապետաց արժանաւոր յաջորդներն  
ու փոխանորդներն էք , մենք ալ սիրով ընդու-  
նինք : » Արովհետեւ ես ալ այն Հայոցմէ եմ ,  
ուստի ես իմ մասիս այսպէս պիտի խօսիմ :

Պիտի փնտռեմ ձեզմէ երանելի Հայոց  
հայրապետաց գործերը , Լուսաւորչի , Գրի-  
գորիսի , Վրդանեւսի , Արիատակէսի , Մե-  
ծին Ներսէսի , Սահակայ , Մեսրոպայ , Ղեւ-  
ոնդեանց , Թճնեցւոյ , Ենորհալոյ , եւ այլ  
անթիւ հաւատարիմ եւ ազգասէր հայրա-  
պետաց եւ եկեղեցականաց գործերը : . . . . .

. . . . . Բայց այսինչ երկար կէտերու  
շարք էր որ առջեւս գրիք . ի՞նչ . միթէ ին-  
ձի նշանադիր սովրեցրնել կ'ուզէք , թէ մեր  
գործերը մարդոց անխմանալի եւ անճառելի են  
ըսել կ'ուզէք : Լսեցէք ուրեմն եւ տեսէք թէ  
ձեր գործերը մարդոց իմանալի եւ ճառելի են  
թէ անխմանալի եւ անճառելի : Գուք չորս հա-  
րիւր տարուան մէջ , Ազգին կամ լաւ եւս ըսեմ  
Պոլիս գտնուող Հայոց սիրտը Սեւտարանին մէջ  
գրուած խողուց վահմակին պէս դեւեր ու սա-  
տանայններ լեցրնելով , ամեն մէկը մէկ մէկ ժայ-  
ռէ վար գահավիժեցուցիք եւ անկից ուրիշ  
յիշատակի արժանի բան մը չլիժողուցիք : Գուք այն  
Հայոց անուններնին երկնից աստղերով գրուե-



լու արժանի հայրապետաց եւ եկեղեցականաց  
 Հայոց տանը մէջ մեծապայծառ վառած ջահե-  
 լը ժամանակին խառված տարերաց հնչած դառ-  
 նաշունչ հավերով մարած ըլլալը տեսնելով՝ դա-  
 նոնք դարձեալ վառելու փոյթ չ'ունենալէն զատ  
 Հայոց տանը մէջ եղած գողերը գտնելու եւ  
 Ազգն ալ խաւարի մէջ չըխարխափելու համար  
 ժողովրդեան մէջէն քանի մը անձանց արթննա-  
 լով, դառն աշխատութեամբ վառած փոքրիկ  
 ճրագն անգամ ուխտեցիք մինչեւ որ շունչերնիդ  
 հատնի փչելով մարելու: Եւ ուրիշ մահուան  
 քնոյ մէջ եղողներն ալ, որ աչքերնին բացին ու  
 լոյս տեսան, անոնց ալ երդում ընելով ըսիք.  
 «Փչեցէ՛ք, մարեցէ՛ք, այդ լոյս չ'է, հրդեհ է  
 որ տուներնիս պիտի վառէ:» Աւրեմն դուք Հա-  
 յոց հայրապետաց ո՛չ յաջորդներն էք եւ ո՛չ  
 փոխանորդներն էք, այլ անոնց արեամբն ու  
 աշխատութեամբը դնուած Հայոց ազգին որ-  
 դերն ու ցեցերն էք: «Աս' ձեզ օրինականացդ  
 զի թագուցանէք փականս գիտութեան, դուք  
 ոչ մտանէք, եւ որք մտանելոց են արգելուք:»  
 Ա՛հ. Գլ. Ժ. 52: Հայոց հայրապետաց ճա-  
 կատը լուսեղէն դրելով դրուած էր. «Ես եմ  
 հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դէտէ՛ ի վե-  
 ռայ ոչխարաց:» Յ՛վհ. Գլ. Ժ. 11: Բայց ձեզի  
 այս բաժին մնացեր է. «Իսկ վարձկանն, որ ո՛չ  
 հովիւ. որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսա-



նէ զգայլն զի գայ , թողու զոչխարսն՝ եւ փախ-  
 չի , եւ գայլն յափշտակէ զնոսա , եւ ցրուէ «  
 Քանզի վարձկան է , եւ չ'է փոյթ նմա վասն  
 ոչխարայն : » Յ. Ա. Գ. Ժ . 12 : « Յաթոռն  
 Մովսէսի նստան դպիրքն եւ փարիսեցիք : . . .  
 Կապեն բերինս ծանունս եւ դժուարակիրս .  
 եւ դնեն 'ի վերայ ուսոց մարդկան . եւ մատամբ  
 իւրեանց ոչ կամին շարժել զնոսա : Եւ զամե-  
 նայն զգործս իւրեանց առնեն 'ի ցոյցս մարդ-  
 կան , լայնեն զգրպանակս իւրեանց , եր եր-  
 կայնեն զքղանցքս հանդերձից իւրեանց : Սիրեն  
 զյառաջագահս յընթրիս , եւ զնախաթոռս 'ի  
 ժողովուրդս՝ եւ զողջոյնս 'ի հրապարակս : Եւ  
 կոչել 'ի մարդկանէ՝ ռա'րի ռա'րի : » Մատե . Գե  
 ԻԳ . 2 : Հայոց հայրապետաց ժամանակը ե-  
 կեղեցականութիւնը այն աստիճանի յարդի էր ,  
 որ Մեծն Ներսէս , Խոսրով անձեւացի եւ Գրի-  
 դոր Մաղխատրոս ու այլ բազմաթիւ իրենց նը-  
 ման ազնուականներ եւ իշխաններ ու սեպուհ-  
 ներ ցանկացին ձգել իրենց զարդերը եւ իշխա-  
 նութիւնը ու դալ սեւ զգեստներու մէջ մտնե-  
 լով եկեղեցական ըլլալ . բայց հիմայ ո՞վ կուգայ  
 եկեղեցական կ'ըլլայ : — Աւր որ անարուեստ  
 եւ հեղգ ու պղերգներ կան անոնք , մինչեւ ան-  
 գամ ձկնորսներն , վասն զի առաքեալք ան-  
 գամ ձկնորս էին : ( Սակայն Պօլսոյ ձկնորսնե-  
 րէն եւ ձկնավաճառներէն չ'էին ) : Չեզմէ ա ,



մենէն յառաջագոյն համարուածը Մատթէոսն  
 էր որ սրբազնութենէ սրբազնասրբութեան բարձ-  
 րանալով մինչեւ Առսաւորչի աստուր բազմեցաւ .  
 բայց ի՞նչ կ'ընէ Ազգին այսպիսի ցաւալի եւ կա-  
 րեկցութեան արժանի վիճակին մէջ . առեր է  
 Գաշանց թուղթ ըսուած Արաբացւոյ երեսինը-  
 ման սեւ ստութիւն մը առջեւը եւ գրչին թա-  
 նաքը անառ (սատոն) ըրած կըտրորէ յամառու-  
 թեամբ եւ կ'ըսէ թէ՛ « Չեան պէս պիտի ճեր-  
 մակցնեմ : » Ուսման եւ կրթութեան մասին ալ  
 բոլոր փիլիսոփայից հայրը եւ մայրն ու դաստի-  
 արակողներն ալ դուք էք . եւ բոլոր աշխարհիս  
 գրքերն ալ ձեր գրչին մաշելովը ելեր են . Արա-  
 ղահան եւ անոր նման ընտիր ճատենագրութեաննէր .  
 Գուք այն փիլիսոփայներն էք՝ որ Փեշտմալճեան  
 պատուելոյն շարադրած բառարանը տպուելու  
 հրաման ալ չ'ուղեցիք , թէ « Յանկ չ'ունի : »  
 Բառարանին ինքն բառերու ցանկ ըլլալովը որ  
 դարձեալ ցանկ կըլինաւէք . ես ալ իրաւունք  
 չ'եմ ունենար որ ձեր դիտուն մէջ դդմի կուտ  
 փնտռեմ : Ա՛հ , այն օրն էր Հայաստանի ժայ-  
 ռէ ժայռ եւ ապառածէ ապառած դարնուե-  
 լով մենչող ալեաց մէջ ընկղմելուն շար վայր-  
 կեանք որ՝ անոր դիւցապնական ձեռաց կարօտ  
 դեկավարութիւնը ձեր ձեռքը յանձնուեցաւ :  
 Խեղճ Հայաստան , չորս հարիւր տարիէն ի վեր  
 տակաւին այդ յուսոյդ պիտի խաբուի՞ս թէ Պօլ-



այս մէջ աղաղակիս լսող ու օգնութեան հասնող  
 Պատրիարքարան ունիս : Պատրիարքարանը Պո-  
 լիս մեծամեծ հոգեր ունի . — Ի՞նչ է արդեօք  
 ունեցած մեծամեծ հոգերը . Ազգը մածունի  
 պէս տիկը (Բուսլոս) լեցնելով հարել, մինչեւ որ  
 իրենց ճգնաժամի կերակուր կարագի եւ ու կանեւ : Թըշ-  
 ուա՛ն Հայաստան . անոնք հոս հարանիքներ ու-  
 նին, ո՞վ պիտի լսէ քու աղիողորմ հեծեծանացդ  
 ու հառաչանքներուդ : Սպասէ՛ քիչ մը կանչե-  
 լուդ կարօտութիւնը շուտ կ'առնես : Քեզի ալ  
 քանի մը նուիրակ կըրդ ըլեն, երբեմն խաբելով եւ  
 երբեմն ալ հարկահանաց պէս ստակ կ'ուզեն, փա-  
 փաքդ կըլեցընեն : Չ'եմք գիտեր թէ ասկից ու-  
 ըիչ Պօլսոյ Պատրիարքարանը Հայաստանի ի՞նչ  
 ըրած ունի : Քանի՞ Պատրիարք ելաւ գնաց Հա-  
 յաստանի վիճակն հասկընալու համար շրջեցաւ եւ  
 կամ՝ քանի՞ եպիսկոպոս զրկեց... ո՛հ, ո՛չ, ո՛չ, թող  
 չ'երթան . ատոնք ո՛ւր որ երթան խռովութեան  
 եւ կոմնակցութեան սրումը իրենց բուրվառին  
 խնկոյն խառնելով կըցանեն : Եթէ հարցընենք  
 ձեզի թէ Հայաստան ի՞նչպէս է մահուան ան-  
 կողնոյն մէջ, եւ ո՞վ է զինքը մահուան անկող-  
 նոյն մէջ ձգողը, ամենեւին չ'երկբայինք որ պի-  
 տի լսէք թէ՛ Հայաստանի իրաւունքին վրայ  
 մըջուն մը որ կոխել յանդգնի, խնկոյն անոր ոտ-  
 քին տրուիլուն ու դղրդիւնը ամպի գոռալու պէս  
 ականջնիս կըհասնի եւ շուտով օգնութեան կը



գիմենք . եւ Աեսարու պէս ալ Ս. զգին կը հասկը-  
 ցնենք Աէնի , Արի , Վիւնի , այսինքն եկի տե-  
 սի , յաղթեցի : Իսկ եթէ ինձի հարցընես , ո՛չ  
 թէ մըջուն մը որ Հայաստանի իրաւունքին վրայ  
 կոխէ իսկոյն անոր ոտքին տրուիւնն ու դըրդիւ-  
 նը ամալի գողալու պէս ձեր ականջը կը հաս-  
 նի , այլ եթէ լեռնակուտակ փիղ մ'անգամ որ  
 գայ Պօլիս եւ ձեր ականջին վրայ կոխէ , ար-  
 թննալիք չ'ունիք : Արդեօք աչքերնիս գերեզ-  
 մանին աղջամուղը չըլցուած պիտի տեսնե՞նք  
 հայրենարնակ Հայերը որ միահամուռ եւ միա-  
 հաղոյն ձեռք ձեռքի տան եւ իրարու ձայնի լը-  
 սելով Պօլսոյ Պատրիարքարանին ու անոր գոր-  
 ծակատարաց ամեն մէկ մօրուքին թւոյն չափ  
 առ Ս. զգն ունեցած պարտքերնուն հաշիւը ու-  
 ղեն : Բայց ի՞նչ կ'ըսեմ . Հայաստանցոց յու-  
 սահատելի Հայութեան վիճակէն այսպիսի գործ  
 մը երեւակայելնին անգամ իմ ալ յուսալս յան-  
 ցանք չ'է՞ : Խեղճերը ի՞նչ ցաւերու եւ ի՞նչ հա-  
 րստահարութեանց ներքեւ են : Հայաստանցիք  
 Տաճկին հպատակ են , Մարտի ( \* Ի - Բ \* ) գերի , եւ  
 ամեն մէկ բռնաւոր իրենց վրայ թագաւոր . . .  
 ո՛չ , այնպիսեաց քովը ի՞նչպէս խորհելու , մը-  
 տածելու , եւ խորհածնին ու մտածածնին ալ  
 գործադրելու կարողութիւն կրնայ ըլլալ : Խեղճ  
 ժողովուրդը՝ երբ որ այնպիսի խժդժից ձեռքէն  
 անտանելի հարստահարութիւն կրեն եւ սրտեր-



նուն մահաբեր վերքեր բնութենին, հապիւ կրնան  
 քանի մը մարդ Պօլիս դրկել՝ որ Տերութեանէն ա-  
 դիտողորմ աղաղակներով եւ հառաչանքներով վեր-  
 քերնուն դարման հայցեն. բայց ինչպէս թարգ-  
 մանած է Պատրիարքարանը Տերութեան, այն  
 բազուկներնին վերցուցած պաղատանօք հառա-  
 չողաց եւ ադիտողորմ աղաղակներով խնդրած դար-  
 մաննին: Անմիջապէս անցած է այն պաղատա-  
 նօք աղաղակողաց առջեւը եւ ըսած է Տերու-  
 թեան: «Տէր իմ, ձեր բարձրագոյն շնորհիւք՝  
 իրենց ունեցած վիճակին բարելաւութեանն ու  
 հանգստութեանը փոխարէն, եկեր են իրենց  
 սրտին խորին երախտագիտութիւնը մատուցա-  
 նելու: Եւ գոհութիւն կը մատուցանեն որ ի-  
 րենց սրտին խորին երախտագիտութիւնները  
 ձեզի թարգմանելու պաշտօնը մեզի շնորհեր էք՝  
 եւ կը պաղատին որ միշտ մեզի շնորհէք:»

Մենք ասոնց ուրիշ անհախմար նահատա-  
 կութեանցը եւ անստորագրելի առաքինութեանցը  
 վրայ մանրամասնաբար պիտի դրէինք, բայց  
 հարկ չ'եղաւ, վասն զի իրենցմէ նոր Եղիշէ  
 քաղցրաբառաւ եւ հայրենասէր պատմագիր  
 մ'ելեր է եւ հետեւեալ կերպով այս քանի մը  
 տարուան անցից վրայ ըստի «ճով պատմութիւն  
 մը գրեր է:

«Քանզի ՚ի փառնալ զօրածն էէնիւերեաց  
 հաշխառհէս Բիւրէճիւ եղան լուսաւորեալ կամ



լավ ելիս ըզերս լուցաւորեալ օւշօռչեալ օմանս  
 ել կամեցան նօգա փառնալ զմէզ հաշխատհե  
 ել իշղելոյ 'ի վերայ Հայոց, ել մեր անշար ատ  
 դատանօգ Հայոց ազգին աչգը Խաբաթիչ ըրած  
 նիս Խաբաթի մը մէջ բանալ ուղեցին. Ել հօր  
 ժամ փերին մէջ մի Սատանայադրութիւն, զոր  
 ինդեանք Սահմանադրութիւն ասեն ել  
 հօրժամ խնթրէին 'ի մէնչ զի ստորագրութեամբ  
 ել երդմամբ հաստատուցուք. զմթաւ ատե  
 լով մէր թէ հարկն զօրէնս լուծէ, ել շշեշ  
 Խանս զուս օլմալը Կեօբրեայի Կէշեմեօլէ, ըստ  
 թիւրագրեցաք ել ըստ թիւրագրութիւնն մեր  
 այլում պահու Եալաթիչ ըրանք, ել զուղտն  
 կլանելն մէր ուրացաք, ո'չ դիտէին նօգա զի  
 քան մէր դրեալ է, « Զմթղուկս քամեմք եւ  
 զուղտս կլանեմք: » Մատե. Գլ. ԻԳ. 24: Եւ  
 զտուվեալ հաստատութիւնն մէր աստանդեցաք:  
 Եւ զլուսավորեալ կոջեցեալ կրակապաշտիցն 'ի  
 մէջ սուրբ եկեղեցւոյ Եալաթիչ ըրած կրակին զմո  
 խիրն 'ի ձեռն քաշամարտիկ Խոսրոսաճաճեաց տա  
 լով « Կրթիչ ընել տուանք յաչս նօճա: Անթ էր  
 տեսանել շտապ մեծի տաղնապի երկուց կող  
 մանցն խիզախելոյ, ել մեզ դարձեալ աղօտս  
 արարաք զի աղտութիւն ստանանք, ել հայնմ ա  
 հեղ ժամուձ օ'ջ դադարեցաք զանունս հիշելէ 'ի  
 մէջ պատարագի Տեառն մերոյ Երեմիայ ըրիատո  
 սի: Քայծ յանձանգն Երուսաղէմի Պատրիար



քին էղեւ յ որ մեռած ասուն խաղար ջրաւ թէ  
 պիտի մեռնիմ որ երթայինք դուռն սակաւ վա-  
 ուէինք եւ աղօտ ընէինք յ որ մէր գաղտ—նիդ-  
 երն երեւան ջեշնէին : Սա գրտեցի Քառս Հա-  
 յոց կամ լավ եւս ըսեմ խճողաց աչքն գոցել եւ  
 դաջս կապել յոյժ դիւրին : Իսկ Պօլսեցի Հայօձն  
 խիտ դժուար որ եւ նօգա կամէին փանալ դաջս  
 խճողաց եւ տրձակել աջս նօձա : Արկին զմէզ 'ի  
 ծովն եւ մեզ իբրեւ Հոման յեա սակաւ ավօւրձ  
 ելադ 'կ դուռն Նինուէի եւ այն եւ զգայն . . .  
 . . . Եւ Քառս-ճառճի պատրաստ են հօրժամ  
 ձիւն գայցէ 'ի մէջ փոխոցած կանգնեացեն զար-  
 ձանս մեր սպիտակ ձիւնէ ֆանն այնչափ վաս-  
 տակաց եւ աշխատանաց փոխարէն : »


Եթէ Հայոց հայրապետները դան եւ ա-  
 սոնց ժողովուրդը կողոպտելու համար միայն  
 եկեղեցիներուն մէջ դարանի մտած ըլլալնին  
 տեսնեն, անտարակոյս Յիսուսի պէս ձեռ-  
 քերնին մէկ մէկ խարազան առնելով, « Տուն իմ  
 տուն աղօթից կոչեացի եւ դուք արարիք զգա-  
 այրս աւագակաց : » ըսելով դուրս պիտի վճնտեն-  
 բայց Արուսաղէմի տաճարին մէջ զօրք չըկար,  
 որ Յիսուս այնպէս կրցաւ ընել, ասոնք Տէրու-  
 թիւնը խարելով եւ Ազգը զբաբարտելով ու  
 կասկածելի ընելով զօրք ալ կրգտնեն, որով  
 Ազգին ողջամիտ մասին կամացը դէմ Պատրի-  
 արք եւ տեղապահ նստելէ զատ, Աճէմեանե



տէր Գրիգոր քահանայ մ'անդամ Բերայի թա-  
ղեցւոց ողջամիտ մասին կամացը դէմ պիտու-  
րաց բանակով մը կ'երթայ Բերայի Երրորդու-  
թեան եկեղեցին քահանայութիւն ընելու :

Ահաւասիկ Պօլսոյ մէջ Ազգային արտօնու-  
թիւնները այսպիսեաց ձեռք է, որոնք Հայոց կը-  
րօնքին պաշտօնեայներն ըլլալով հանդերձ, եկե-  
ղեցւոյն ազատութիւնն անդամ ոտնակոխ ընել  
կ'ուզեն եւ ըրին, ուրիշ այլ եւ ի'նչ չարիք չը-  
յուսացուիր ասոնցմէ : Ազգասիրաց սիրտը կը  
վհատեցնեն եւ կը պաղեցնեն : Պօլսոյ մէջ աղ-  
քատը կը դիմէ անհամեատութեան, եւ Հայաս-  
տանցիներն ալ ՚ի գերեզման :

Հայաստանցի եզրաք, մեք մէկ պարզ եւ  
անոյշ առակ մ'ունինք որ Պօլսոյ Պատրիարքու-  
թեանն ու ամիրայապետութեանը պէտք է ը-  
սենք, չորս հարիւր տարի կ'ընէ « Տանձ էր նէ  
հասաւ, խնձոր էր նէ կարմրեցաւ : » քիչ մ'ալ  
սա մեղի բարիք խոկացող եւ Սահմանադրութիւ-  
նը հաստատելու ջանացողաց հետ միանանք,  
տեսնենք թէ կը լուսաւորի մեր կեանց դժուա-  
րամուտ եւ խարխալեցի պողոտայնք եւ կամ կը  
լուցուի'ն մեր սրտերը ազգասիրութեան սիրով,  
ու կը լուծաւորուի'ն մեր ուսելիք մեք ընդարձակ  
դպրոցներն ու պարարտ արտօնները պողարներ ը-  
նելու համար : Սահմանադրութիւնով կարողալ  
դրել, ընտրել եւ զիրեւոր հոգալ ու սիրել պիտի  
սովորինք :



Եւ Հայաստանի Գրական Գործակալութիւնը  
11. 11.







